



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ



Ա. ԱԵՐԱՅՈ

ՄԱՆԿԱՆ

ԱՕՏ

ՎԵՐՁԻՆ  
ԽՈՍՔ

№ 7

85ր.  
U-43

1905  
Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

-6 NOV 2011

85 Ա

Ա-43

ՄԵՐ ԷԺԱՆԱՍՊԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ  
Հրատ. տիկին Զարելի

Այ

# ՄՍՆԿԱՆ ՄՕՏ

Ա-43-1

Ա.-ՊԵՏԵՂԲՈՒՐԴ  
«ՊՈՒԽԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՑԻԴ» ՏՊԱՐԱՆ  
1905.

30.07.2013

ддд

Дозволено цензурою. С.-Петербургъ, 4 Октября 1904 г.



2375-54

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ пер. 4.

\* \* \*

Իտալիան այժմ բաւական մեծ թագաւորութիւն է, նա բոնում է ամբողջ Ապենինեան թերակղղին։ Բայց այդ պետութիւնը շատ ուշ ժամանակներ կազմուեց։ Մինչև 1859 թուականը, այսինքն քառասուն հինգ տարի արանից առաջ, Ապենինեան թերակղղու վրայ մի քանի անկախ պետութիւններ կային, իսկ ամբողջ Հիւսիսային Իտալիան—գերմանացի աւտորիացիների ձեռքին էր։

Իտալիայի ժողովուրդը շատ էր ուզում ազատուել գերմանացիների իշխանութիւնից և Ապենինեան թերակղղու բոլոր մանր, ինքնուրուն պետութիւնները միացնել—մի մեծ պետութիւն կազմել։

Իտալիան միացնելու դործը ֆրանսիացիների օդութեամբ՝ յանձն առաւ իտալական փոքր իշխանաւորներից մէկը՝ Սարդի-

նեալի թագաւոր Վիկտոր-Էմմանուէլը: Ֆրանսիացիները 1859 թուին աւստրիացիներին ստիպեցին Վիկտոր-Էմմանուէլին զիշել իտալական հողերի կէսր: Բայց այդ հողերի միւս մասը, գեղեցիկ Վենետիկ քաղաքի հետ, մի քանի տարի ևս մնաց Սլստրիացիների ձեռքին: Իտալիայում անկախ տէրութիւններ էլ էին մնացել: Բայց այդ պետութիւնների ժողովուրդը միածայն ցանկութիւն էր յայտնում միանալու... Եւ թագաւորներն ստիպուած եղան իրանց գահից հրաժարւելու: 1861 թուին Վիկտոր-Էմմանուէլը «իտալիալի թագաւոր» տիտղոսն ընդունեց:

1866 թուին Սլստրիալի և Պրուսիալի մէջ պատերազմ սկսուեց: Վիկտոր-Էմմանուէլ թագաւորը դաշն կապեց Պրուսիալի հետ: Պրուսացիները յաղթեցին Սլստրիացիներին և խաղաղութիւն կնքելիս՝ ստիպեցին Վենետիկը Վիկտոր-Էմմանուէլին զիշել: Վենետիկի՝ ընդհանուր իտալական պետութեան հետ միացնելը՝ ամբողջ իտալիայում բուռն հրճուանըով ընդունուեց:

Հիւսիսալին իտալիան ոռոգում է Պօգետը իր նիւղերով: Այդ գետը թափում է Միչելիքական ծովի մի մեծ ծոցը՝ որ Ազրեատիկ ծով է կոչում: Պօ-ի գետաբերանում տղծից

բաղմաթիւ մանր կղղեակներ են գոլացել որոնց վրայ սրանից մօտ 1500 տարի առաջ հիմնուել է Վենետիկ քաղաքը:

Այս քաղաքն ամբողջովին չըով է շրջապաւած: Տներն ուղղակի չըանցըների վրայ են շինւած: Ջրանցըներից բաղմաթիւ կամուրշներ են ձգուած որոնք միացնում են քաղաքի նեղ փողոցները: Փողոցներից միայն մարզիկ են անցնում: Ով ոտքով դնալ չէ ուզում չըրանցըից «գոնազով» է գնում: «գոնազովները» երկար, նեղ նաւակներ են: Նաւագարները խիստ հմուտ են և մի ձեռքով են թիւվարում:

Վենետիկը մի ժամանակ չափաղանց հարուստ քաղաք էր, բայց այժմ կատարեալ անկման է հասել:

---



\* \* \*

Երեկոյ է: Մալը մտնող արևի ճառա-  
գայթների տակ ծովածոցի ափին խաղաղ նրն-  
չում է փոքրիկ իտալական գիւղը: Ծովը հան-  
գարտէ, ափին մօտ ուրախ լողանում է երեխա-  
ների խումբը: Այսուեղայնտեղ երեւմ են  
ձկնորսական նաւակներ:

Փոշոտ ճանապարհից անցնում են սալ-  
լակները: Դրանք զիւղացիներն են՝ որ տօնա-  
վաճառից են գառնում: Նրանց յետերց գա-  
լիս է մի սև սալ՝ չորս կողմից ծածկուած:  
Նոյնիսկ նրա փոքրիկ պատուհանը փայտէ  
փեղկով ծածկուած է: Բոլորը նրան ճանա-  
պարհ են տալիս:

Ահա սև սալն ափին կանդ առաւ: Բաց-  
ուեց միակ գռնակը: Դուրս է գալիս մի զին-  
ւոր, ահա մի ուրիշը, լետով՝ երրորդը, ամեն-  
քից վերջը՝ քսան տարեկանի մօտ, բարձրա-

հասակ, գժզոյն, շէկ մազերով մի երիտասարդ: Նրա երկնագոյն, մեծ, նուրբ աչքերը անձեղ երեխայի աչքերի պէս փայլում են: Շալվարը՝ հին, վերնազգեստը՝ հին, դիխարկը՝ իւղոտած, ծեռքերը՝ շղթայակապ: Նրա տեսքը հանդարտ է, հետաքրքրութեամբ նայում է կանաչ կրղզուն որ երեսում է հեռուում:

Ոչդ կզզին—նիղիկան է: Նրա վրայ են տաժանակիր աշխատանքի դատապարտուած յանցագործների խցերը, այնտեղ են նրանք ապրում, այնտեղ են աշխատում:

Որքան էլ որ հեղ, որքան էլ որ բարեհամբոյր է պահապաններով շրջապատուած երիտասարդի հայեացըր, այնուամենայնիւ՝ թէ այդ պահապանները, թէ շղթաները ցոյց են տալիս՝ որ նա «յանցագործ» է: Ըստ երեսիթին՝ նրան նիշապոլից են բերել, որպէսզի նիղիկատանին: Կզզուց մի նաւակ եկաւ: Դանդաղ ու չափով շարժուում են թիհակները երկու թիհավարների ձեռքին: Նաւակն առանց աղմուկի կանգնեց ափին: Նրա վրայ իշաւ մի զինւորը, յետոյ՝ միւսը, ապա՝ դատապարտեալը և վերջապէս՝ երրորդ զինւորը: Նաւակն ափից հեռացաւ: Ծանրութեամբ լողում է նա գէպի կղզին: Դատապարտեալը խաղաղ ու մտածկոտ հայեացքով նայում է ջրին, երկնքին: Լուս են

և պահապանները, լուս են նաև թիհավարները....

II.

Ահա կզզին:

— Հասանք դուրս թռաւ դատապարտեալի բերնից:

Նաւակը մի փոքրիկ սանկուխի ծօտեցաւ: Պահապանները նոյն խորքով ափ եկան, ինչպէս նստել էին: Դատապարտեալը կանգնեց նրանց մէջ տեղը:

— Մենք այս բոպէիս կը դառնանք, սպասեցէք, ասաց թիհավարներին մի զինւորը:

Նորեկներն սկսեցին բարձրանալ գէպի վեր: Դատապարտեալը հայեացըր երկնքին էր ուղղել, կարծես ուղում էր կշտանալ արեի ճառագայթներից ու թռչունների ծրվիրվոցից: Վերջապէս՝ մի քարի պատի հասան, ներս տանող դուռը՝ երկաթէ, պահապանը կողքին: Եկւորները ցոյց տուին իրանց տոմսակը: Պահապանը հրացանը կողքի քաշեց և ահազին կողպէքը բաց արեց: Դանդաղ յետ շարժուեց ծանր դուռը. եկւորներին ներս թողեց և նորից փակուեց:

Դատապարտեալին ինչ-որ մի առանձին

քաղաք բերին: Ահա մի հրապարակ, շըշապատուած է ցածր տներով: Դատապարտեալին տարան այդ տներից մէկր: Ազքատ կահաւորուած մի սենեակ է, երկու սեղան, մի քանվ աթոռ: Պատին խաչելութեան պատկերը, ապա՝ իտալական թագաւորինը և ուրիշ ոչինչ: Սեղանի մօտ նստած է ազքատ հագնուած, կորացած մէջբով գրագիրը:

— Վերակացուն ալստեղ է, հարցրեց զինորներից մէկր:

— Այս բոպէիս կը դայ, առանց պլուխը բարձրացնելու պատասխանեց գրագիրը:

\* \* \*

Վերակացուն եկաւ: Մօտաւորապէս քառասուն տարեկան մի մարդ էր, բարեհամբոլը, բայց լուրջ դէմքով: Պահապանները նրան զինորական պատիւ տուին: Նա պատասխանեց և գատապարտեալին մի հայեացը ծղելով՝ նստեց:

— Ձեր անունն ի՞նչ է, հարցրեց նա:

— Ոօկիօ Տրետօ, պատասխանեց գատապարտեալը:

— Մականուն ունէ՞ք:

— Պահապաններն ինծ «Սկիւռ» անուանեցին:

— Ո՞ր աեղացի էք:

— Նիապօլյի:

— Քանի տարեկան էք:

— Քսան և վեց:

— Ո՞ւմ որդին էք:

— Հանդուցեալ Ժենարօի, պատասխանեց յանցագործը և նրա ձախնը զողաց:

— Դուք հայրասպանութեան համար էք դատապարտուած, յնցուելով խօսեց վերակացուն:

Ոօկիօ Տրետօն լոեց: Գրագիրը գրեց նրա անունը, ապա հարցրեց:

— Տաժանակիր աշխատանքի է դատապարտուած մինչև մահը, անորոշ ժամանակով:

— Անորոշ ժամանակով, պատասխանեց վերակացուն:

Գրագիրը մի թուղթ վերցրեց և վրան դրեց. «Համար 417: Կարծիր զիսարկ»:

Վերակացուն գանգահարից. ներս մտաւ մոխրագոյն շապիով, ուե զիսարկով մի ծառայ:

— Դատապարտեալին հագնուելու տար, հրամալից նրան վերակացուն:

— Ոհա նրա համարը, աւելացրեց նա, տալով գրագրի պատրաստած թուղթը:

Մառան և Տրիտօն դուրս եկան... նրանք բաւական ժամանակ գնում էին բանտային շինութիւնների կողքից և վերջապէս մի մութ սրահ հասան։ Այդ դարբնանոցն էր։ Դարբինը զնդանի մօտ աշխատում էր։ Հէնց ալդաեղ, պարկերի վրայ նստած էր բանտի ծառան։

Ռոկոզի շորերը հանեցին։ Ձեռքերից քանզեցին շղթան՝ դէն ծգեցին։ Պարկից հանեցին կոշտ կարորից կարտած մի շապիկ, շալվար, վերնազգեստ և կարմիր զլիարկ։ Ամեն մի առարկայի վրայ գրած էր. «Համար 417»։ Այդ բոլորը հագցըին Ռոկոզին նրան, որպէս մինչև կեանքի վերջը դատապարառուածի՝ կարմիր զլիարկ տուին։ Որոշ ժամանակով դատապարառուածին կանաչ զլիարկ էին տալիս։

Դարբինը գործի անցաւ։ Մունկ չոքած, դատապարտեալի աչքերին նա սկսեց մի երկաթէ ող յարմարցըներ։

— Նեղ չէ, չի՞ սղմում։

— Ալդպէս լաւ է, պատասխանեց ոճրագործը։

Եղթան արշին ու կէս երկարութիւն ունէր։

— Միւս հոտքս ել կը շղթայէք։

— Ո՞չ, այժմ բարձրացրու շղթայի ազատ ծալրը, անցկացրու գօտուդ վրայի օղակին։

Իսկապէս դօտու վրայ մի օղակ կար, դրան պէտք էր կապել շղթայի ծալրը որ շատ ընեղացնէր։ Սակայն՝ չնայելով վրան՝ շղթան այնուամենայնիւ՝ բաւական ծանր էր, իսկ երկաթէ օղակը սղմում էր կալանաւորի ոտքը։

\* \*

Երեկոյեան աղօթքի ժամանակն եկաւ. ամենքը դիմեցին դէպի մատուռը։ Ռոկոզն նրանց հետևեց։

Սա փայտէ նստարաններով, մեծ, մաքուր մի մատուռ էր։ Կալանաւորները նստեցին։ Շատերը անկեղծութեամբ, տաք կերպով աղօթում էին, միւսները՝ միայն տեսքի համար։ Նրանց հալեացըն այս ու այն կողմն էր շըրջում, շըրժունքները պինդ սեղմուել էին իրար։ Կալանաւորները հանել էին իրանց կարմիր ու կանաչ զլիարկները, սրանց վրայ սպիտակ ներկով համարներ էր գրած։ Ամբոխի մէջ այս-աեղ-այնտեղ պահապաններ էին կանգնած։ Միապաղազ հնչում էր քահանայի ծայնը. նրան արձապանք էր տալիս աղօթողների ցածր շշուկը և շղթաների զրնդղնոցը։ Աղօթողները աղմուկով ցած էին թողնում շղթաները, ծունկ էին չոքում և վերկենալիս՝ դժուարութեամբ էին բարձրացրում շղթաները։

Քահանան ամբոխին օրհնելու համար՝  
բարձրացրեց խաչելութեան պատկերը։ Կա-  
լանաւորները ծունկ չոքեցին։ Խօկիօն նրանց  
հետեւց։ Եւ Խօկիօլին թուաց՝ որ շղթան  
նրա ամբողջ մարմնի շուրջը փաթաթուեց։  
Նրա հոգու խորքում շղթավից ազատուելու,  
փախչելու միաբը ժագեց։ Ամեն մի կալանաւոր  
շարունակ փախփախում է այդ միաբը։

— Պէտք է փախչել, անպատճառ փախ-  
չել, մտածում էր Խօկիօն։ Կարծեմ ափը տա-  
նող ճանապարհը վաս է պահպանում. իսկ  
յետոյ՝ գիշերը ջուրը կընկնեմ։ Կը լողամ...

Ժամասացութիւնը վերջացաւ։ Կալանա-  
ւորներն ընթրելու գնացին։ Խօկիօն նոյնպէս  
կերաւ, զբոսնեց, բայց շարունակ մտածում էր.

— Պէտք է փախչել, անպատճառ փախչել  
Իր մահակալի վրայ պառկած՝ լայն պա-  
տուհանից դուրս էր նալում ծովին, երկնքին  
և անընդհատ մտածում էր.

— Պէտք է, պէտք է փախչել։

Նա ծրագիր էր կազմում թէ ինչպէս  
դուրս կը գայ պատուհանից, ինչպէս...

Բայց յանկարն ուր որ հեռուն, գիշեր-  
ւայ լոռութեան մէջ լսուեց պահպանի կան-  
չը։

— Լը-սիր...

Մի ըսպէից՝ արդէն աւելի մօտ՝ որպէս  
պատասխան՝ հնչեց.

— Լըսիր...

Աւելի ևս մօտ, աւելի սուր հնչեց եր-  
րորդ կոչը.

— Լըսիր...

Բոլորովին մօտիկ տարածւեց՝

— Լըսիր...

Եւ վերջապէս Խօկիօլի պատուհանի տակ՝  
նոյնպէս հնչեց. //

— Լըսիր...

Յետոյ՝ ձայներն աւելի հեռացան, մէկը  
միւսի յետելցից... և հեռուում խեղդուեցին։

Խօկիօն հասկացաւ՝ որ բանան ու ծովա-  
փը պահպաններով շրջապատուած է։ Սարսա-  
փահար՝ նա աշխատում էր նորից վերակեն-  
դանացնել իր մէջ փախչելու, ազատուելու  
միաբը, բայց քառորդ ժամ յետոյ՝ նորից հեռ-  
ուում լսւեց.

— Լը-սիր...

Եւ կոչը գարձեալ աւելի ու աւելի մօ-  
տեցաւ, լսւեց պատուհանի տակ ու շարունա-  
կեց ուղին՝ կղզու շուրջը։ Եւ այդպէս՝ ամեն  
մի քառորդ ժամը մի անգամ... պահպաննե-  
րի կոչից ընած կալանաւորները մահակալի

վրայ շուռ էին դալիս, զթանելը զբցնդղըն-  
դում...:

Բայց Խօհկօն չէր ընում. ո՞չ ամեն քառարդ ժամին նա անկողնից սարսափահար վեր էր թռչում, ամեն մի կոչից փախուստի լոլսն աւելի ու աւելի թռուլանում էր: Վերջապէս կէս-գիշերին անվերջանալի «լրսիր» կոչից՝ նրա սիրար կոտրւեց, կոտրւեց և կամքը...  
Նա զառնութեամբ արտասւեց:

III.

Վերակացուի բնակարանում լուռ էր:  
Ինըը վերակացուն բազկաթոսի վրայ նաստած՝  
կարգում էր: Նրա չահել, դժգնադէմ կինը  
կար էր անում և սիրալիք հայեացըն էր ձգում  
երեք տարեկան որդու վրայ... Շաքանակագոյն  
մագերով շրջապատուած քնքոյշ մանկական  
դէմքը թեքուել էր գէպի պատկերները որ նրա  
առաջ կն դրած:

Հայոց որդուն նաև եց:

— Умро

— *Swiętka.*

Եւ ճանուկը դեղիկ, պայծառ, բարի  
աչքեղը հօրը դարձրեց:

— *ហេង ក្រ អនុលោម*,

— Թղթից զինորներ եմ կտրառւմ:  
— Արի ինձ ծօտ, համբուրիր ինձ:  
Մանուկը վեր թռաւ, իր տարիքի համեմատ՝ նա մեծ էր, բայց ծօր պէս նիհար ու տժուն էր:

Վագեց հօր մօտ, բարձրացաւ նրա ծնկներին և կպաւ կրծքին:

— Հիւանդէ, հարցրեց հայրը:

— Ո՞չ, ո՞չ, պատասխանեց մայրը:

— Տժգոյն է. ամեն օր պէտք է զրօսնեանել: Խնչու այդպէս ուշ-ուշ ես բաց առնում: Մի թե կառքը պատրաստ չէ:

### — *Questa è la* *l:*

— Իսկ ի՞մ գրքակալու բերելու էն:

U. S. Min.

= *bogot* *mbozo* *ste* *bunbu* *mabu*

— *hęz* *widzi* *że* *śmierć* *do* *zawiesić* *żęz* *tu*

Դա սյօն չը հասկեա, աղալսորմ է,  
իւ էտ ու քաջան նշան Բար առ 11

— Իսկ բանւորը, բանւորին կատելիր։  
Կէս Շ Ա Հ Յ Լ Վ Ե Լ Վ Ե Լ

Վրասր լժոռուցիկ հայեացը օգեց ասուասու  
վրաչ և կամաց խօսեց.

— Ես ինքս կաշխատեմ կախել:

— ինչու, սիրելիս, դու կը յոզնես, իսկ

բանւոր կալմանաւորը այդ մի բռպէում կսինի:

— Ո՞չ, ո՞չ, աւելի լաւ է ինքս...

卷之三

2375-54



Այս անդամ վերակացուի դէմքը մռալ-  
լուեց:

— Դու չես ուղում որ տունկ ոճրա-  
գործներ գային, հա՞:

Կինը շփոթուած՝ ամուսնուն նայեց և  
կամաց ասաց.—

— Նրանից վախենում եմ:

— Բայց մի՛թէ նրանց չես խղճում:

— Ո՞չ

— Զէ՞ որ նրանք մարդիկ են, բրիստո-  
նեաներ են:

— Նրանք դողեր ու մարդասպաններ են,

— Եւ այնուամենայնիւ՝ նրանք մարդիկ  
են ու քրիստոնեաներ:

Կինը լուեց: Մանուկը զլուխը բարձրաց-  
նելով՝ նայեց մօրը, հօրը և ծեռքերը փաթա-  
թեց հօր վզին: Հայրը քնքշութեամբ շոյեց  
նրա զլուխը:

— Որդեակս, դու է՞լ ես վախենում դա-  
տապարտեալներից:

Մանուկը հօր հարցը չը հասկացաւ:

— Ոճրագործները—դժբախտ մարդիկ են,  
կիսածայն ասաց հայրը:

— Դժբախտ... խղճահարութեամբ կրկնեց  
մանուկը:

— Լսի՛ր, թող գայ բանւորը կախ անէ  
զրբակալը, ասաց չահել կինը:

— Ինչո՞ւ սիրելիս, չէ՞ որ դու նրանց  
չես սիրում:

— Ոչինչ... Ես մանկան հետ կը գնամ  
զբոսնելու, առանց ինձ թող բաշ անեն:

\* \* \*

Վերջին ժամանակները նրան ամենից լո-  
ւախ երիտասարդ, բարձրահասակ, ահեղ կա-  
լանաւորն էր հանդիպում, երկնագոյն աչքե-  
րով, խիտ, շէկ մազերով 417-դ համարը: Գլո-  
խին կարմիր զլխարկ էր ծածկած—նշան՝ որ  
դատապարտւած է մինչև մահը: Հանդիպում-  
ների ժամանակ կալանաւորը նրանց քնքոյչ  
հայեացքով ուղեկցում էր մինչև անհետանալը:  
Կինն ամուսնուց ամաչում էր՝ որ ինքը կալա-  
նաւորներից վախենում է և զգւում, բայց չէր  
կարողանում իրան զսպել: Բարի անձնաբաց  
և սիրող կին լինելով՝ նա շատ անդամ կրրկ-  
նում էր ամուսնու խօսքերը. «Նրանք մարդիկ  
են, բրիստոնեաներ են»: Իր մէջ հարիւր ան-  
դամ վճիռ. էր կայացնում պատասխանելու այդ  
թշուառ մարդկանց բարեին, բայց հէնց ա-  
ռաջին պատահելուց՝ երեխին կրծքին էր սեղ -

մում և քաղլերն արագացնում: Ահա այժմ՝ էլ  
նա ամուսնու զեմ ամօթ է զգում: «Նա որ-  
քան լաւ է, իսկ ես՝ վատ», մտածում էր ինքն  
իրան և զղման արցունքները երևացին աչե-  
րին, գործեցին երեսից, ընկան մանկան վրայ:

— Մի՛ լար, մի՛ լար, մալրիկ:

— Ո՞չ, չեմ, սիրելիս, դնանք զբունելու:

— Սալլակնի:

— Այո՛, սիրելիս, ես քեզ կը տանեմ սալ-  
լակով:

#### IV.

Սալլակը ծանր է, կոպիտ, բայց փոքրիկ  
Մարիօլի ինչ գործն է: Մի անգամ որ նստեց՝  
ալես չի ուղում ցած իջնել: Մալրը ման է  
ածում նրան ամբողջ կզում: շատ անգամ ման-  
կիկը կիսախոռվ աչքերով ննջում էր... բայց  
մալրը կանդ էր առնում թէ չէ իսկոյն դարթ-  
նում էր:

— Քշիր սալլակս, մալրիկ:

— Այս բոպէիս, սիրելիս:

— Քիչ հանդստանալու մաքով նա լեն-  
ում էր սալլակի կոթին, բայց նորից լսում  
էր մանկան աղերսական ձախնը.

— Սալլակս բշիր, մալրիկ: Տար ինձ:

Եւ մալրը շարունակում էր ուղին:

— Այսօր ո՞ր կողմը գնանք, Մարիօ:

— Այս կողմը, այն... յոյց էր տալիս  
մանկիկը գեղի ծովը: Մալրը գժուարութեամբ  
էր բշում սալլակը. վերջինս ծանր էր և նրա  
ոչիցից բարձր, ուստի և թուլակազմ կինը զօ-  
ռում էր ամբողջ կրծքով:

Սակայն՝ յոդնածութիւնը յաղթեց երի-  
տասարդ կնոջը. նա նստեց մօտի նստարանին:  
Տեղն ամայի էր. այդուղ վերջանում էին շի-  
նութիւնները և սկսում էր դաշտը: Մանուկը  
նստում էր մօր յոդնած գէճքին, կիսափակ  
աչքերին և հաղիւ լսելի ձախով շնչում էր:

— Տար ինձ, մալրիկ:

— Այս բոպէիս, այս բոպէիս, պատաս-  
խանեց մալրը:

— Եթէ թոյլ կը տաք՝ տիրունի, սալ-  
լակը ես կը քշեմ, լուեց նրանց մօտ կորովի,  
բայց հեզ մի ձայն:

Նրանց առաջ կանգնած էր դժգնալէմ,  
համար 417-ը կալանաւորը:

Երիտասարդ կինը երկիւղով նրան նայեց:

— Սալլակը ծանր է, յարգանքով շարու-  
նակեց կալանաւորը. թոյլ տուէր, ես տանեմ:

— Ո՞չ ոչ...

— Տիրուհի՛, չէ որ ծեղ համար ծանր է.  
թոյլ տուեք.

— Ո՞չ բարկացած կրկնեց մայրը:

— Ներեցէ՛ք համարձակութեանս, զգու-  
շութեամբ կը տանեմ, մի՛ վախենաք

— Ես չ':մ վախենում, այլ ուղղակի չեմ  
կամենում որ գուը տանէք մանկանը:

Այս ասելով՝ տեղից վերկացաւ և սայ-  
լակը դժուարութեամբ առաջ քշեց: Կալանա-  
ւորն, առանց մի խօսք ասելու, տիրութեամբ  
նայում էր մօր ու մանկան յետեից:

— Մայրի՛կ, խօսեց Մարիօն:

— Ի՞նչ է:

— Ինչո՞ւ կալանաւորին «ո՛չ» ասացիր:

— Այդպէս է պէտք:

— Մայրի՛կ, դժուարութեամբ ես քաշում  
սալլակըս:

— Ո՞չ, սիրելի՛ս:

— Թո՞ղ, ես ոտքով կը գնամ:

— Նստի՛ր, նստի՛ր, մանկի՛կս, մի քի  
էլ կը տանեմ, յետոյ հանգստանալու կը նստեմ

Եւ նրանը շարունակեցին ճանապարհը  
Մանուկը նայում էր իրանց հանդիպող զին  
ւորներին:

— Մայրի՛կ:

— Ի՞նչ է:

— Կալանաւորն ուղում էր ինձ հեռու-  
հեռո՞ւ տանել:

— Այո՛, այո՛:

Նա թշուա՞ս մարդ է, հա՞:

— Ո՞վ է ասել:

— Հայրիկա:

Մայրը շփոթուած զլուխը քաշ ձգեց:

— Իսկ զինւորները, մայրի՛կ... նոյնպէս  
թշուառ մարդիկ են:

— Ոչ, զինւորներն ազնիւ մարդիկ են:

— Ուրեմն՝ զինւորները ազնիւ մարդիկ  
են, իսկ կալանաւորները՝ թշուառ:

\* \* \*

Նրանք հասան կանաչ մարդերը: Ցան-  
կապատը բաժանում էր մարդագետինը հա-  
րեան զերեզմանատնից: Մայրը կանգ առաւ:

Նա այնքան խիստ էր յօդնած՝ որ համարեա  
զլուխցաւ դետնին: Մանուկը ծաղիկներին,  
ծովին էր նայում, մայրը հանգստանում էր:

— Ինչքան շատ ծաղիկ կայ, մտածում  
էր մանկամարդ կինը:

Նա մօտեցաւ ցանկապատին հողաթում-  
բերով ծածկուած շիրիմները կանաչով էին  
ծածկուել: Վայրենի վարդեր և զանազան խո-

տեր փաթաթուել էին սև խաչափայտերին: Վերջիններիս վրայ կալանաւորների համարներն էին դրած, կալանաւորներ, որոնք վերջապէս այստեղ հանգատութիւն են գտել: Միքանի խաչափայտեր ծռուել են, միւսները՝ բամուց վայր ընկել: Ոչ ոք չէր հոգում այդ խղճուկ գերեզմանատան մասին: Ոչ ոք չէր դալիս շիրիմների վրայ աղօթելու:

\* \* \*

Մարիօն սալտկում նստած ժպտում էր: Նրա կողքին հողի վրայ պառկել էր դժոնադէմ, խիտ մագաւոր մի կալանաւոր: Կանաչոստով նա մանկանից ծաններն էր հեռացնում:

— Կամաց, կամաց, կամաց շարժիր ոստր մայրիկը քնած է, ասում էր մանուկը՝ մատնացոյց անելով մօրը:

Քիչ հետու, կակաչի ծաղկի նման՝ կանաչների միջից երեսում էր կալանաւորի կարմիր գլխարկը, համար 417:

Մայրն առաջին անգամ նայեց կալանաւորի վրայ առանց երկիւլի: Վերջինս դիտեց նրա հայեացքը, շփոթուած՝ տեղից վերկացաւ անվճռականութեամբ ձեռքի մէջ պտտեցրեց ոստը:

— Այո, հողը ամենքին կը հաւասարեցնէ, մտածեց կինը և բարձր ծայնով ասաց:

— Գնանք:

Իոկկօչին նշան արեց՝ սալտակը ցոյց տալով, սա ուրախութեամբ վերցրեց. կարմիր գլխարկը և սալտակը բշեց:

V.

Կղզին եկաւ բանտալին վերահսկիչը: Դայիսուն տարեկան մի մարդ էր: Բարեխիղ մարդ լինելով՝ հետեւում էր ամեն մի բանին, քննում էր ամեն մի անկիւնը: Բանտի խաղաղ ու համբերով վերակացուն ոչ մի բոպէ նրանից չէր հեռանում և բացատրութիւններ էր տալիս, տեղեկագրեր, հաշիւներ կալացնում:

Սրդէն երեք օր է՝ վերահսկիչը կղզու վրայ էր ապրում: Ճաշից լետոյ նա վերակացուի հետ գնաց զմօսնելու:

— Ի՞նչ է, զ՞ո՞ն էք ձեր կեանքից, հարցրեց նա վերակացուին:

— Աշխատում եմ ուժերս ներածին չափ գործս լաւ կատարել: Բարեխղճութեամբ կատարած պարտքը միշտ մարդու կեանքը զարդարում է:

— Իսկ ձեր կինը կարծեմ այստեղ շատ  
է տխրում:

— Այս: Նա համբերութեամբ ու տոկու-  
նութեամբ տանում է իւր վիճակը:

— Գոնէ նրան շուշաշուտ նկազօլ ու-  
ղարկէիք:

— Այդ թանկ է նստում. մեր միջոցները  
չեն ներում:

Այդ ժամանակ մօտեցան կալանաւորների  
աշխատանքի տանը:

— Յօժարութեամբ են աշխատում:

— Ոչ ամենքը: Մի լիսուն մարդ յամա-  
ռութեամբ խոյս են աալիս աշխատանքից:

— Դրանց պատժում էք:

— Այս, ժայրահեղ դէպքում. սակայն՝  
միշտ աշխատում եմ այդ միջոցին չը դիմել,  
որովհետև դրանով աւելի կատաղում են, քան  
հպատակւում:

— Ինչի՞ց է որ մի քանիսը յամառ են,  
միւսները ոչ:

— Յամառութեամբ դիմադրում են նրանք,  
որոնք ազատ ժամանակ թափառաշրջիկներ են  
եղել. դրանք աշխատանքի անսովոր են, ոչ  
մի կերպ չես կարող աշխատեցնել: Ահա հէնց  
դրանցից մէկը:

Վերակացուն ցոլց տուեց մի կալանա-  
ւոր՝ որ քարի վրալ նստած՝ հաց էր ուտում:

— Էլ, կալամա:

Կալանաւորը տեղից չը շարժուեց. վե-  
րակացուն նորից ձախն տուեց:

— Մահ-խարող! այդ կալանաւորի մա-  
կանունն էր:

Այս անգամ կալանաւորը յետ դարձաւ:

— Չեր անունն ի՞նչ է, հարցրեց վերա-  
հսկիչը:

— Մահ-խարող, պատասխանեց կալանա-  
ւորը անգուրեկան ձայնով:

— Այդ ձեր մականունն է, իսկ իսկա-  
կանն ի՞նչ է:

— Վաղոց մոռացուած է:

— Ինչու չէք աշխատում:

— Չեմ ուզում:

— Չէ՞ որ դուք տաժանակիր աշխատան-  
քի էք դատապարատուած:

— Դատապարատուած էմ: Ի՞նչ անեմ,  
ինչի՞ դատապարատեցին, սատանան նրանց հետ:

— Մի հայհոլէ՛ք, պէտք է աշխատէք:

— Այստեղ բանարկեցին, շղթալակապ  
արին, և կարծում են՝ որ կը սկսեմ հոգի մա-  
շել, աշխատել, ինչպէս չէ՞:

— Կաշխատէք՝ իշխանաւորները լաւ աչքով կը նայեն:

— Շատ հարկաւոր է: Միւնոյն է՝ խօմ քսան տարի պէտք է մնամ այստեղ: Միայն դեռ յայտնի չէ՝ կը մնամ քսան տարի:

— Ի՞նչ էք ուզում ասել:

— Կարող եմ մեռնել... փախչելն էլ խօմ մեղք չէ:

— Նիզիդայից անկարելի է փախչել, մէջ խառնուեց վերակացուն:

— Կարելի է, ինքներդ գիտէք՝ որ մէկը փախաւ: Ճիշտ է, մէկն էր փախչողը, բայց որտեղից որ մէկն անցել է՝ միւսն էլ կանցնի: Դլխաւոր՝ որ բարձր ափից չուրը թռչելիս վիզդ չը կոտրես:

— Բաւական է, ընդհատեց վերատեսուչը:

Զի հպատակւում, բոլորովին չի հպատակւում, խօսեց վերակացուն: Այդպիսիք 50 հոգի են:

— Զե՞ն ապստամբւում:

— Մի անդամ ապստամբւեցին:

— Միայն մի անդամ:

— Այո՛: Նրանց մէջ միշտ տարածայնութիւններ կան, ամեն մէկն իրան ամենալաւն է

համարում: Զեն կարողանում համածալինութեան դալ: Այդ ինձ ձեռնաու է:

— Այնուամենայնիւ՝ ապստամբւեցին:

— Այո՛... զլուխս քարով պատռեցին:

— Ի՞նչպէս, ինքնե՞րդ գնացիք ապստամբների մօտ: Զինւորներ ինչի՞ չուղարկեցիք:

— Աւելի կը կատաղէին. գործը կը մետնար:

— Իսկ ի՞նչպէս հանդստացրիք:

— Խօսեցին Թովլ տուի ուզածներն ասելու: Նրանք պահանջում էին՝ որ աւելի հաճախ թռը տրուի ազգականների հետ տեսակցել. ոչ թէ երկու ամիսը, այլ ամիսը մի անգամ: Այդ խելօք պահանջ էր: Ես համածալնեցի: Ասացի՝ որ եթէ իրանց լաւ պահեն՝ երկու շաբաթը մի անդամ թռը կը տամ տեսակցելու:

— Ազգականները յաճա՞խ են այցելում:

— Ոչ: Շատերը հեռաւոր տեղերից են աքսորւած: Նոյնիսկ նիազոլցիներին ուշ-ուշ են այցելում: Այնուեսակները կան՝ որ իրանց ընտանիքում են ոճրագործութիւն արել: Թրրանց ոչ ոք չի արգելում: Օրինակ մէկը կայ— Ռոկի Տրեաօ, «Ակիլուր», հարբած ժամանակ հօրն սպանել է: Երիտասարդ, խաղաղ մի մարդ է: Համարեա ամեն օր մօրն աղերսական

Նամակներ է զրում: Նամակները կարդացել եմ  
մարդու սիրտ են կտրտում...

— Մայրը եկաւ...

— Ո՞չ, նամակներին չի ել պատասխա-  
նում,

— Հասկանալի է:

— Ի՞նչպէս ասեմ, չէ՞ որ մայրական սիրտ  
է: Որդին մինչեւ այժմ էլ կարծում էր որ մայ-  
րը կը դայ: Ենթադրում է որ նամակները  
տեղ չեն հասնում, որ կարելի է ճանապարհա-  
ծախս չունի, և ալն, և ալն:

— Այդ ի՞նքն է ձեզ պատմել:

— Ո՞չ, որդուս է պատմում, ժպաաց վե-  
րակացուն:

— Զե՞ր որդուն:

— Այո՛, Ռօկիոն միշտ նրա հետ է: Շա-  
րունակ հետեւում է նրան սիրող, անձնուեր  
հայեացըռփ:

Եւ դուք թողնում էք ձեր որդուն յան-  
ցագործի մօտ:

— Այո՛, այո՛, նրանցից շատ շատերին  
կարելի է ամբողջովին հաւատալ:

— Այսպիսի խօսակցութիւնով շարու-  
նակեցին ուղին:

— Ոռրը ան պատուհաններ կան դէպի

Ժովը: Մերկ կալանաւորները չե՞ն փախչում,  
հարցրեց վերատեսուչը:

— Նրանցից ամեն մէկը մտածում է զրա  
մասին և երազում. ինչպէս ամենախաղաղ,  
ամենաշանասէրները, այնպէս և անհնաղանդ-  
ները շարունակ փախուստի մասին են մտա-  
ծում:

— Կարծեմ կղզին վատ է պաշտպան-  
ւած:

— Այդ միայն երեսութավին է, գնանք,  
տեսէք:

Նրանք հասան ափը. վերջինս ալնըան  
բարձր էր՝ որ ծովը կարծես անդունդի մէջ էր:

— Ամեն կողմ էլ ալզպէս է, բացարեց  
վերակացուն. բացի ալդ՝ ամեն մի հարիւր  
քայլի վրայ պահապան է կանգնած, զիշերները  
աւելի մօտ:

— Բայց չէ՞ որ փախուստի փորձեր ե-  
ղել են:

— Այո՛, մի տասը փորձ եղել է իմ ժա-  
մանակ: Սովորաբար պահապանները նրանց  
նկատել են մինչեւ ծովը հասնելը. երեք հոգին  
միայն թռել են ծովը, մրկուսը շարդուել են  
և միայն մէկը՝ փախել է... Նա էլ լողալու  
խիստ հմուտ էր. ազատ ժամանակ զրանով էր

հա աշխատում. խրած բաները չըից հանում  
էր: Բայց դրան էլ նէապօլում բռնեցին:

— Իսկ միւսները:

— Բոլորը քարերին են զիաղել և չար-  
դուել են, առաւօտ նրանց զիակները գտել ենք:

VI.

— Վերակացուի տունը մի պատշդամբ  
ունէր՝ կանաչներով ու ծաղիկներով շրջապա-  
տուած: Երբ Մարիօն չէր ուզում սենեակում  
նստել կամ սալլակով զրօսնել՝ այդ պատրշ-  
դամբն էին զուրս բերում:

— Սիրելիս, տիսուր ես, հարցնում էր  
մայրը:

— Ո՞չ, մայրիկ:

— Կուզես նէապօլ զնալ:

— Զդիտեմ, մայրիկ. այստեղ էլ լաւ է:  
Բայց մայրական սիրար պնդում էր.  
«Մէնք այստեղ կալանաւորւած ենք, կալանա-  
ւորների մէջ ենք»: Այնինչ ամուսնու և Մա-  
րիօնի ցանկութեամբ նա թոյլ էր տալիս՝ որ  
մոկիօն Մարիօնին ման ածէ սալլակով և խա-  
ղալիքներ շինէ: Սակայն մոկիօն ոչ մի ան-  
դամ իր կամքով առանց թոլլաւութեան ներս  
չէր մտնում: Ամբողջ ժամերով նա դռանը

կանգնում էր, մինչեւ որ կը նկատեն, ներս կը  
կանչէն: Ներս էր մտնում յարգանքով, շղթան  
ձեռքով բարձրացնում էր՝ որ աղմուկ չը հանէ:  
Նա ամբողջովին կրծկրում էր՝ որ ոչ ոքի չը  
խանգարէ: Նա Մարիօն դորովագութ մօր  
նման էր նայում: Փոխադարձաբար՝ Մարիօն  
էլ նրան էր սիրում: Շատ անգամ պատահում  
էր՝ որ մօր հետ խաղ էր անում: Մէկ էլ իր  
բարեկամին տեսնէր թէ չէ զէպի պատուհա-  
նը կը վագեր.

— Սկիւռ, սկիւռ... Սկսաեղ արի.

Նրանք իրար հետ տարօրինակ բաների  
մասին էին զրուցում:

— Վերնազգեստգ ով է տուել, Սկիւռ:

— Իշխանաւորները:

— Գլխանրկդ:

— Նոյնպէս իշխանաւորները:

— Իշխանաւորներն ի՞նչ բարի են:

Խօկիօն լոեց: Թուում էր՝ որ եթէ Մա-  
րիօն ցերեկին զիշեր ասէր՝ դարձեալ նա պէտք  
է համաձայնուէր:

Մի բանի ժամանակ յետոյ մանուկը հար-  
ցնում էր.

— Սկիւռ, ալսօր ի՞նչ ես կերել:

— Եփած լօրի:

— Երկրորդը:

- Նոյնպէս եփած լօրի:
- Նախաճաշըն:
- Նոյնպէս լօրի:
- Եւ երկումն էլ ծիծաղում էին:
- Իսկ ես մակարօն եմ կերել:
- Անուշ ըլինի:
- Դու սիրում ես մակարօն:
- Այս:
- Հետեւել անգամ ես քիչ կուտեմ, բեղ  
էլ կը թողնեմ:
- Ո՞չ, մի՛ անհանգստանաք:
- Իսկ ես ուզում եմ որ դու ուժես:
- Դէ լաւ, լաւ, կուտեմ:
- Պատահում էր՝ որ Մարիօն վատ տրա-  
մադրութեան մէջ էր լինում:
- Սկիւ, կարգա այս գիրքս:
- Կարգալ չգիտեմ:
- Ոգիտե՞ս, ի՞նչ լիմարն ես:
- Կարգալ գիտենալի՝ կարելի է բանտը  
չընկնէի.
- Քեզ բանտն են ձգել նրա համար՝ որ  
աւագակ ես» կրկնեց մանուկը:
- Այս, այս, հեղութեամբ կրկնում էր  
կալանաւորը:
- Ահա մանուկը նայեց ծաղիկներին: Ոօկ-  
կօն նկատեց նրա հայեացքը:

- Ծաղիկները չըե՞մ:
- Զրի՛ր:
- Եւ կալանաւորը զգուշութեամբ չըեց ժա-  
ղիկները:
- Սկիւ, աերեներն էլ չըիր:
- Լաւ:
- Եւ մանուկը ծաղիկը պոկեց տուեց Ոօկ-  
կօյին:
- Սկիւ, այս ծաղիկները մայրիկիս  
տար:
- Ոօկկօն երկիւզով Մարիօն նայեց:
- Աւելի լաւ է ինքներդ տանէք:
- Ինչո՞ւ:
- Գիտէր՝ որ մայրիկը մեղ, կալանա-  
ւորներիս չէ սիրում: Եւ... իրաւացի է:
- Եւ Մարիօն ծաղիկները մօրը, տարաւ:  
Հարեան սենեակներից համբոյրի ծայն  
լսուեց: Ոօկկօն ուրախացած՝ ժպառում էր:

\* \* \*

- Մի անգամ վերակացուն հեռագիր ստա-  
ցաւ:
- Լաւ լուրեր, ուրախութեամբ բացա-  
կանչեց նա կնոշը: Վենետիկը իտալիային է  
միացրած:

Նրա աչքերում ուրախ արցունքներ երեւացին:

— Վենեափկը իտալիալին է միացրած. Վենետիկը մերն է, վերջապէս՝ մերն է, երբ կնում էր նա:

— Վենեափկը մերն է, բարակ ձայնով արձականով առւեց մանուկը:

Հայրը բարձրացրեց Մարիոլին և համբուրեց:

— Վենեափկը մերն է, Վենեափկը մերն է, ուրախութեամբ կանչում էր մանուկը:

Մայրն ուրախութեամբ նայում էր նրանց վրայ: Վերակացուն ցնծութեամբ մտածում էր կատարւած իրողութեան մասին: Իր առանձնասենեակը մտնելով՝ երկու ժամ շարունակ ինչ որ կարգագրութիւններ էր անում:

Կղզում սկսւեց չը տեսնուած մի շարժում: Աշխատանքները կանդ առան: Դարբնոցը լուեց: Արհեստանոցներն ամրացան: Զինուորները, աքսորեալները խմբեր կազմած տաք վիճում էին: Ամենքը տօնալին արամադրութեան մէջ ընկան:

Ժամը 4-ին ամբողջ կղզում սկսուեց թմրկահարութիւնը:

Աքսորեալների խմբերից, զինուորատներից՝ բոլորը վերակացուի տան մօտ հաւաքուե-

ցին: Սպաներն ու զինուորները տօնալին զգեստով էին: Նրանց լեակից շարքով աքսորեալներն էին կանդած: Նրանք կիսաձայն էին խօսում. շղթաները զրորնգում էին:

— Վերակացուն եկաւ: Նա էլ տօնազգեստ էր հագած: Մի ծեռքում հեռագիրն էր բռնել, միւսով՝ բերում էր սպիտակ հագնուած մանկանը, սպիտակ դիմարկով:

— Իտալական բանակի պարօնայք սպաներ, բարձր խօսեց աղան: Ուրախ լուրեր են ստացւած. Վենեափկն իտալիալին են զիշել: Վենետիկը մերն է: Իտալիալի միացումը կատարւած է: Բոլոր իտալացիների համար այս մի ուրախալի լուր է: Ամբողջ իտալիալյում՝ քաղաքներում թէ զիւղերում, հարուստի պալատում թէ չքաւորի խրճիթում այսօր մեծ տօն է: Աքսորեալներ, ծեղ էլ ուզիցի մասնակից անել այս ընդհանուր տօնին: Ճիշտ է թագաւորի և օրէնքի հրամանով զուք հասարակութիւնից հեռացըրւած էք, ծեր դատապարտուելն արդարացի է: Բայց հասարակական օրէնքների հետ միասին կան նաև մարդկացին օրէնքներ և քրիստոնէական օրէնքներ: Վերջիններս ներողամտութիւն ու ողորմածութիւն են պահանջում մեղանից: Յանուն այդ օրէնքների ծեղ մասնակից եմ անում մեր ընդ-

հանուր հայրենիքի ու բախալի տօնին: Այսօր  
ես մոռացութեան եմ տալիս ձեր մուլթ ան-  
ցեալը, դուք ևս աշխատեցէք մոռանալ ձեր  
ծանր զրութիւնը և մասնակից եղէք հալրե-  
նիքի տօնին: Այս ընդհանուր ուրախութեան  
ժամանակ միայն մի բան լիշենք. մենք բոլորս  
միենոյն կաթողին մօր զաւակներն ենք—այդ  
իտալիան է: Ու բախանանք միատեղ:

— Կեցցէ՛ իտալիան, կեցցէ՛ Վենետիկը.  
Լուսեց մի մանկական ձայն:

— Կեցցէ իտալիան, կեցցէ՛ Վենետիկը,  
կրկնեցին սպաները, զինուորները, աքսորեալ-  
ները... ժամանակաւոր դատապարտեալները,  
մինչև մահ դատապարտեալները—ամէնքը միա-  
սին, միաբերան, միասիրա:

— Կեցցէ՛ Վենետիկը, կեցցէ՛ իտալիան:  
Երբ խաւարն իջաւ երկրի վրայ, շինու-  
թիւնները, ծառները զոյնզոյն լապտերներով  
դարգարւեցին: Շատ աշխատանք թափուեց  
զրա վրայ, բայց աշխատում էին ամենքը միա-  
բան—թէ՛ աքսորականները, թէ՛ զինուորները:

Մարին Ռոկոկի ձեռքից բռնած՝ ամբողջ  
օրը հրճուանքով հետեւում էր երեկոյեան պատ-  
րաստութիւններին: Նա ուրախացած՝ ծափա-  
հարում էր և տանը մօւնեալով՝ կանչում՝

— Մայրիկ, մայրիկ.

— Ի՞նչ է դառնուկս, տուն եկար:  
— Ոչ, ոչ, Սկիւռի հետ զբունում ենք:  
— Միք վասիլ, տիրուհի, ես կը նայեմ:  
եւ ճիշտ որ՝ Ռոկոկոն լաւ էր պահպա-  
նում իր փոքրիկ ընկերողը:

— Զէք մրսում, փոքրիկ տէ՛րս:  
— Ոչ, ոչ դեռ շոքում էլ եմ:  
Երեկոյեան գէմ կզղին լոյսի մէջ կորել էր:  
Ամեն տեղ երդ ու նուազածութիւն էր լրու-  
ում:

Ամբոխը խմբուել էր նուազածուների  
շուրջը՝ հրապարակի վրայ: Ազգաեղ էին և  
աքսորեալները: Այս դիշեր նրանց ազատ էին  
թողել:

Նուազածուները պար նուազեցին:

— Սկիւռ, սկիւռ, ինձ ուսերիդ բար-  
ձրացրու, ուսերիդ բարձրացրու, կանչում էր  
Մարիօն իր բարեկամին:

Աքսորեալը ուժեղ ձեռքերով մանկանն  
ուսերին էր բարձրացնում: Մանուկը ծիծա-  
ղում էր և ու բախացած՝ ուսերով թմբկահա-  
րում Ռոկոկի պինդ կրծքին:

— Պարենք Ռոկոկ, պարենք, Սկիւռ:

Աքսորեալ՝ երեխի հետ սկսում էր պա-  
րել: Պարում էին և միւս աքսորեալները, զին-  
ուորները: Ուրախութիւնը համակեց ամենքին:

VII.

Մարիօն հիւանդացաւ: Նրա սենեակում՝  
պատուհանի փեղկերը ծածկեցին: Մայրը զըլ-  
խի վերեր նստած՝ հեքիաթներ էր պատմում:  
Մարիօն լսում էր: Նրա աչքերը փալլում էին  
տենդալին փալլով: Շրմունքները չորացել էին:  
Նա արդէն հինգ օր է՝ հիւանդ էր: Հայրը օրը  
մի քանի անգամ մտնում էր նրա սենեակը:

— Ի՞նչպէս է, լաւ է:

— Այն, այն, լու եմ, հայրիկ, պատաս-  
խանում էր մանկիկը:

Բայց մօր աչքերը տիրութեամբ լի էին:  
Նա չէր նկատում որդու լաւութիւնը:

— Ի՞նչպէս կուզի սրան այս աքսորա-  
տեղից հեռացնել, կամաց ասում էր նա ա-  
մուսնուն:

— Անկարելի է, սիրելիս, բժիշկն ասում  
է երեխին չի կարելի անհանգստացնել:

Ինձ խօսք առւր որ մի քիչ լաւանաչ—կը  
տանես նէապօլ:

— Լաւ, լաւ:

Օրեր ու գիշերներ անցնում էին առանց  
փոփոխութեան, մայրը որդու անկողնուց չէր  
հեռանում:

Ոօկկօն մանկան հիւանդութեան ամբողջ

ժոմանակը շորունակ թափառում էր նրանց  
տան առաջ: Նա նոյնիսկ ներս մանելու փորձ  
արեց, բայց ազափինը չը թողեց.

— Տիրուհին հրամայել է աքսորեալներին  
ներս չը թողնել:

— Իսկ ի՞նչպէս է փոքրիկ աիրող առող-  
ջութիւնը:

— Վատ:

Այդ ժամանակուանից Ոօկկօն անբաժան  
կանգնած էր տան առաջ: Նա թողնում էր  
իր աշխատանքը և ամբողջ ժամերով գուանը  
կանգնած՝ տեղեկութեան էր սպասում իր սի-  
րելու առողջութեան մասին:

Աշխատանքը թողնելուն պատճառով՝  
պատիմները տեղում էին նրա զլիսին, բայց  
այդ բանին նա ուշագրութիւն չէր գարծնում,  
չէր քնում և շարունակ Մարիօլի սենեակի  
փակ փեղկերին էր նայում: Ազախնին պատա-  
հելիս՝ նա շարունակ հարցնում էր.

— Ի՞նչ կայ, ինչպէս է:

— Ոչի՞նչ, ոչի՞նչ յայտնի չէ, Աստուած  
զիան:

Մայր Աստուածածին, Փրկիր նրան, ա-  
ղերսում էր Ոօկկօն սրտի խորքից:

Այժմ Ոօկկօլին ամենքից խիստ վիշտ էր  
պատճառում այն, որ անկարող է ներս մտնել

հիւանդի մօտ: Երբ պատուհանի առաջ որևէ մարդ էր երկում, նա զլխարկը հանում էր, ծիքանի անգամ զլուխ էր տալիս՝ յոյս ունենալով՝ որ իրան ներս կը կանչէ: Բայց պատուհանը փակում էր և նա ստիպուած էր լինում նորից անցուգարձ անել, նորից սպասել:

— Վերջապէս՝ Ռոկիօն չը համբերեց և գնաց վերակացուի ընդունարանը: Վերակացուն՝ զլուխը բարշ գցած՝ պարապում էր: Երկար ժամանակ Ռոկիօն զլուխը բաց՝ կանգնած էր: Վերջապէս վերակացուն զլուխը բարձրացրեց:

— Այդ դուք էր, Ռոկիօն ի՞նչ էր ուղում: — Ես ուղում էի միայն... խնդրել... ուղում էի հարցնել... ի՞նչպէս է փոքրիկ տիրոջս առողջութիւնը:

— Նա ծանր հիւանդ է, յուզուած պատասխանեց հայրը, նա խիստ տանջւում է:

— Ո՞վ Աստուածածին, կոչեց Ռոկիօն: — Խեղճ փոքրիկը համբերող է, մայրը միշտ նրա կողքին է, շարունակեց հայրը:

— Ե՞րբ կառողանայ, շուտո՞վ... — Միքանի օրից: Պէտք է սպասել: — Նա... չի կարող ոչ ոքի տեսնել... — Վերակացուն հայեացըն ուղղեց աքսորեալին: Ռոկիօնի դէմքը ալնպիսի քնքշու-

թիւն, երկիւղ, ցանկութիւն, աեսնելու ցանկութիւն էր արտայալում...

Մի րոպէ մտածելուց՝ պատասխանեց.

— Ոչ, նա զեռ թով է, շատ կը յոդնի:

— Սակայն... առաջ՝ նա ինձ հետ խաղում էր... նա ինձ հետ ուրախ էր...

— Գիտեմ, բայց բժիշկն արգելել է մարդ

թողնել նրա մօտ: Մի բանի օր էլ սպասեցէք:

— Յետով կարելի՞ կը լինի:

— Կը տեսնենք. առաջմ նրան հանգստութիւն է պէտք:

Ռոկիօն չէր հեռանում. ըստ երկոյթին՝ նա դարձեալ ասելու բան ունէր: Վերջապէս սրտապնդուեց.

— Դուք այնքան բարի էր, սկսեց նա, ողորմութիւն արէք, շնորհ արէք...

— Ի՞նչ էր ուղում:

— Իմ կողմից մանկիկն բարեեցէք: Ասացէք՝ որ Սկիւոր կարօտալից, խոնարհ բարի է ուղարկել... չէ՞ք մօտանալ:

— Հանգիստ եղէք, այդ նրան կասեմ:

— Շատ շնորհակալ եմ:

Եւ նա կամացուկ դուքս եկաւ: Վերակացուն աչքերով ուղեկցում էր նրան:

— Այդ իսկ մարդն աքսորեալ է: Դատապարտուած է յաւիտեանս, մտածում էր

նա: Գրգոռուած ժամանակ՝ կռուի մէջ դա կարող էր հօրն սպանել: Մի սարսափելի բոպէի համար՝ մայրը նրանից հրաժարւում է, տեսնել անդամ չէ ուզում: Այդ բոպէի պատճառով՝ նա ամբողջ կեանքն է կորցնում, տաժանակիր աշխատանքը կրում է որպէս արժանաւոր պատիմ... Եւ այժմ՝ վշից մի մանկան սիրուց՝ հալւում ու կծկում է...

Վերակացուն զիտէր բոլոր կղզում կատարւածները, զիտէր՝ որ Ռօկկօն հիւանդի տան մօտ թափառում է, կրում է այդ պատճառով շատ պատիմներ, զիտէր՝ որ նոյնիսկ զիշերներ՝ լաշողեցնում էր իցից զուրս փախչել և մինչեւ լոյս նայում էր Մարիօնի սենեակի լոյսին:

Առաւօտ վերակացուին յայտնեցին՝ որ ըստ երեսլին՝ Ռօկկօն մտադիր է փախչել: Վերակացուն պատասխանեց՝ որ Ռօկկօլին հաւատում է, և հրամայեց չը պատժել:

Նա խղճում էր այդ թշուառին, բայց կնոշ հետ նրա մասին չէր համարձակւում խօսել: Կինը շարունակ կրկնում էր:

— Չէմ ուզում աքսորեալներին տանս տեսնել:

Վրայ հասաւ մի առաւօտ—ախուր առա-

ւօտ: Լապտերի լոյսը կռւում էր ցերեկւայլոյսի հետ—փոքրիկ Մարիօն մեռաւ:

### VIII.

Վերակացուն իր սենեակում նստած՝ պուխը ձեռքերին լենած՝ զառնութեամբ արտասուում էր: Ներս մտաւ՝ կինը:

— Խոստումդ պէտք է կատարե՞ս:

Նա խոստացել էր Մարիօլին «Նէապօլտանել՝ երբ կարելի կը լինի»:

— Այժմ, հարցըեց նա:

— Այո՛, հէնց այժմ: Ես ուզում եմ Մարիօլին տանել: Թէ չէ նա մնւած, ապրած ու մեռած կը լինի աքսորավայրում և աքսորավայրում էլ թաղւած: Գոնէ ազատ տեղ թաղնք:

— Նէապօլում:

— Այո՛, և ամեն ինչ նրա վրայ պէտք է Նէապօլից լինի, ամբողջ հագուստը... ամենը...

— Լաւ, լաւ:

Հայրը զրտածնեակը գարծաւ և միքանի կաքավայրութիւններ արեց: Յետոյ սկսեցին նրան մօտենալ Նիզիզայի ծառալողները, տղամարզիկ, կանալք, մանուկները: Բոլորը հարցնում էին.

— Կարելի՞ է վերջին անգամ հրաժեշտ  
տալ Մարիոլին:

Իտալիայում այդպիսի սովորութիւն կայ.  
Երբ մի հանդուցեալ է լինում՝ ամենքն իրա-  
ւունք ունեն գնալ՝ վերջին հրաժեշտը տա-  
լու:

Բարեկամներս, քիչ սպասեցէք: Քիչ յե-  
տոյ դուռը բաց կանեն, պատասխանում էր  
վերակացուն:

Եւ ամենը հեռանում էին:

— Ի՞նչպէս է Մարիոյի առողջութիւնը,  
հարցրեց Ռօկկօն աղախնին:

— Մարիօն մեռաւ, պատասխանեց ա-  
ղախինն արտասուբէց խեղդուելով:

Ռօկկօն սարսափից սառած մնաց: Նա  
դրասենեակը դնաց, բայց դիմարկը ծեռքին,  
կանգնած մնաց: Վերակացուն՝ առանց խօսե-  
լու միքանի անգամ անցաւ նրա մօտից: Վեր-  
շապէս Ռօկկօն նրան կանգնեցրեց:

— Բարի եղէք, տէր, իրաւունք տուէք  
փոքրիկ տիրոջ մօտ գնալու:

— Սպասեցէք, սպասեցէք... յետու:

— Ասացէք տիրուհուն՝ որ երբ նա հի-  
ւանդ էր՝ ես չգնացի նրան տեսնելու... դիտէի  
որ տիրուհին չէ ուզում արսորեալներին ներս

թողնել, բայց այժմ աղաչում եմ, միայն մի  
անգամ նայեմ հանդուցեալի գէմքին...

— Լու, լաւ, կասեմ:

\* \* \*

Տաք առաւօտ էր: Տան գուռը բաց էր:  
Մեռած մանկան շուրջը մոմեր էին վառած:  
Մոմերը նէապօլից էին բերել: Մանկան դա-  
գաղը ծաղիկներով էր զարդարած. ծաղիկները  
նոյնպէս նէապօլից էին, գաղաղը՝ նոյնպէս:

Ամենից առաջ մանկան սենեակը Ռօկկօն  
մտաւ, նա հանգարտ ծունկ չոքեց, զլուխը  
խոնարհեց և միքանի րոպէ առանց մի խօսք  
արտասանելու, առանց մի արցունը թափե-  
լու այդպէս մնաց: Յետոյ համբուրեց մանկան  
ծեռքը, յետ դնաց գաղաղից, բայց երկար ժա-  
մանակ դռան մօտ կանգնած՝ նայում էր հան-  
գուցեալին: Նրա մօտից անցնում էին շատ  
մարդիկ, կանայք, մանուկներ, սպաներ, զին-  
ւորներ: Ամենքը ծունկ էին չոքում, աղօթում  
էին և լուռ հեռանում:

\* \* \*

— Ժամանակ է, հրամայեց վերշապէս  
վելակացուն: Զինւորները զգուշութեամբ վեր-

յրին գագաղը: Ռօկկօն անընդհատ իր սիրելուն էր նայում: Նրա աչքերը կարծրել, ուռաել էին և փայլով տարօրինակ փայլում էին: Կարծես իր փոքրիկ բարեկամին հրաժեշտ տալով՝ ինչ որ վճիռ է կայացրել: Դագաղը վերցրին: Բերդի գուոր բայցուեց: Հայրը, մայրը և միքանի սպայ հետեւեցին դագաղին: Ահա նրանք ափին են: Դագաղը նաւակին զրին: Ծնողները նստեցին: Միւսները յետ եկան: Ռօկկօն աչքերով հետեւում էր հեռացողներին: Նաւակը լողում էր կապուտակ ծովի փայլուն երեսին: Ռօկկօն գարծեալ նայում էր ու նայում, նա գիտում էր, թէ ինչպէս ծաղիկներով դարդարւած Մարիօն լողում է դէպ ազատ ափերը և նրան հազարաւոր փայփախական խօսքերով ճանապարհ էր գնում իր աքսորեալ ընկերը, Ռօկկօն-Սկիւոր:

IX.

Հասաւ մութ զիշերը: Մռայլ ամպերը պատեցին երկինքը: Նիզեդան ընկղմուեց խօլ խաւարի մէջ: Օդը խաղաղ էր: Պահնորդներն անփութութեամբ իրաք ձայն էին տալիս: Սակայն ամեն օրուայ պէս՝ ամեն մի բառորդ ժամում լսուում էին նրանց կոչերը.

— Լը-սի՛ր...

Գիշերւայ ժամը երկուսին կղզու մի ժայռում կանգնած պահնորդը ականջները սրեց. Նրան թւաց՝ որ ինչ-որ շշուկ է լսում: Ուշագրութեամբ սկսեց նայել խաւարին, բայց ոչինչ չը տեսաւ:

— Ո՞վ է եկողը, կանչեց նա:

Պատասխան չկար: Պահնորդն աւելի սրեց ականջները: Շուրջը խաւար էր և հանդիսաւ: Կէս ժամ անցած՝ նրան թւաց՝ որ երեսուն քայլ հեռու՝ մի մարդ է շարժւում թփերի մէջ, անդունդի ծայրին: Առանց երկար մտածելու՝ նա նշան զրեց և հրացանն արձակեց: Նոյն բուպէին սիրա կտրասող աղաղակ բարձրացաւ: Իսկ յետոյ՝ յետոյ ամպի գոռոցի պէս տարածւեց կղզում:

— Հրացանը տրաքեցրու, Խփի՛ր:

Միքանի հրացանի ձայն էլ լսուեց: Գրնդակները շրփշրփալով ափից ծովը թափուեցին: Պահնորդներին առաջուց հրաման էր տուած այլպիսի գէպքերում հրացան արձակել: Միայն այլպիսով կարող էին խփել փախչողին՝ եթէ սա փորձ անէր ծովը թռչելու:

\* \* \*

Պահակատեղում սկսեցին ստուգել՝ իմանալու՝ թէ ո՞վ է փախչողը: Եկաւ և վերա-

կացուին փոխարինող սպան, կէս-հագնուած, գժգոյն, վախեցած...

Մի բաժանմունքն ստուգեցին: Այսուեղ բորորը ներկայ էին: Սպան քիչ աղատ շռւնչ քաշեց: Ահա և միւս բաժանմունքում բոլորը ներկայ են...

Ո՞վ գիտէ, կարելի է պահնորդն իզուր տեղն է աղմուկ բարձրացրել:

Բայց վերջին բաժանմունքում միայն 58 հոգի են:

- Ո՞վ է պակաս, հարցրեց սպան:
- Կալաման, Մահ-խաբողը:
- Է՞լ ով:
- Խօկիօն—Սկիւռը:
- Երկուսն էլ նոր եկան:
- Այս:

Սպան շրթունքը կծեց և արագութեամբ դուրս դնաց: Նա ուզում էր անձամբ որոնել փախստականներին: «Մահ-խաբողի» և «Սկիւռի» անունները բերնից—բերան էին անցնում: Թժիերի և քարերի մէջ տասնեակ կրակներ փալեցին: Կղզու ափը կենդանացաւ: Ա.վի հետ զուղընթացաբար՝ լողում էին նաւակները և խարոյկներով լուսաւորում շուրջը: Նաւակների վրայ, խարոյկների դիմաց, փալում էին հրացանների սուր սուինները:

Այսպէս անցաւ ամբողջ գիշերը: Առաւօտ թփերի մէջ երկու կտրտած շղթայ գտան:

«Մահ-խաբողը» չը դանուեց ոչ կենդանի, ոչ էլ մեռած: Ոչ ցամաքի վրայ, ոչ չըի տակ նրան չը գտան և վերջապէս ստիպուեցին յայտաբարել՝ որ «փախել է»:

Բայց Ռոկիօնին գտան: Գտան նրան ծովի տփին, մեռած, չարգուած, զլիից զնդակահարեղած:

## ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔ

(Պատմուածք):

Սրանից եօթը կամ ութը տարի առաջ՝  
փարիզում մի խեղճ արհեստաւոր էր ապրում:  
Նրա հետ ապրում էր մի աղջիկ՝ նրա սիրու-  
հին և իրանց երեխան:

Կլօպը շատ ընդունակ և ձարպիկ արհես-  
տաւոր էր: Բնութիւնն առտասութեամբ շնոր-  
հել էր նրան մտաւոր ընդունակութիւններ և  
հոգեկան լաւ յատկութիւններ, բայց դրանք՝  
դաստիարակութեան չենթարկելով՝ չը զար-  
գացան ու լաւ ուղղութիւն չը ստացան:

Նա կարգալ չը սովորեց, բայց մտածել  
գիտէր:

Մի անգամ, ձմեռը գործ չկար և այդ  
մարդը, աղջիկն ու երեխան սովի ու ցրտի

մասնութեցին։ Այդ ժամանակ մարդը վճռեց գողութեան գնալ։ Ես ոչ դիտեմ՝ թէ նա ի՞նչ դողացաւ, ոչ էլ թէ՝ որտեղից դողացաւ, այնքանը միայն ինձ յայտնի է որ զրանից յետոյ կինն ու երեխան երեք օրուալ հաց ու վառելիք ունեցան, իսկ մարդը հինգ տարուալ բանտարկութեան ենթարկուեց։

Բանտարկութեան տարիները նա պէտք է կլերփօ կենդրօնական բանտում անցկացնէր։ Կլերփօն առաջ վանական միաբանութիւն էր, իսկ յետոյ աքսորատեղ դարձրին։

Բանտում ամբողջ գիշերը նրան խցի մէջ փակած էին պահում, իսկ ցերեկին ստիպում էին արհեստանոցու մ աշխատել։

— Կլօդ Գէն, մի ժամանակուալ ազնիւ արհեստաւորը, իսկ այսօրւայ դողը՝ խիստ լաւ արտաքին ունէր։ Զնայելով երիտասարդ հասակին՝ արդէն կնտիռներով ծածկուած բարձր ճակատ, խիտ, սև մագեր, քիչքիչ սպիտակած։ Լուրջ, բարի աչքեր, որ խորը նստել էին գեղեցիկ գմազրուած յօնքերի տակ։ Քիչ գուրս ցցուած կզակ, սեղմուած շրթունքներ։

Դա մի գեղեցիկ զլուխ էր. պատմութեանս վերջը կը տեսնենք՝ թէ հասարակութիւնը նրան ի՞նչ դարձրէց։

Նա քիչ էր խօսում, ձեւեր շատ չէր առ

նում։ Նրա ամբողջ կազմի մէջ ինչոր վայել-չութիւն, վեհութիւն կար, որ ակամայ մարդու հպատակեցնում էր։ Դէմքն աւելի շուտ մտածկու լրջութիւն էր արտայացառման քան թէ աւանջանք, թէկ նա ասնչուել էր։

Կլօդի բանտարկւած բաժանմունքում, զիսաւոր իշխանաւորը արհեստանոցի կառավարիչն էր—մի պաշտօն՝ որն ունէր բանտալին չինովնիկի և վաշխառու-վահառականի բռնորոշ գծերը։ Նա պէտք է աշխատանքներին հետեւէր և խիստ հսկողութիւն ունենար բանտարկեալների վրայ։ Պէտք է բանտարկեալների ձեռքը գործիքներ տար, իսկ ստքերը զղմայակապ անէր։

Կլօդի իշխանաւորը կատարելապէս համապատասխան էր իր պաշտօնին։ Դաժան, յամառ, ընդունում էր միայն իր ցանկութիւնները, ուրիշն ոչ մի դատողութիւն անելու չէր թույլատրում և իրան բարձր էր պահում, սակայն՝ գեպքը բերած ժամանակ կարող էր և՛ լաւ ընկեր լինել, և՛ ուրախ հանաքչի։ Նրա բնաւորութիւնն աւելի չոր էր, քան հաստատուն։ Ընտանեկան կեանքում անկասկած՝ լաւ ամուսին էր, բարի հայր—սակայն այդ բարեմանութիւն չէ, այլ ուղղակի ամենքի պարտըր։

Մէկ խօսքով՝ այդ մարդը ոչ շատ վատ էր, ոչ էլ շատ չար: Այնտեսակ տիպերից մէկը՝ որոնց բատ երեսըթիւն՝ բնութիւնը շարժուն ատօններից է ստեղծել: Նրանք ուրիշի ցաւը հասկանալ չգիտեն, ճկուն չեն, ոչ մի դադա-փարով չեն տարւում, ոչ մի զգացմունք նրանց չէ տաքացնում: Նրանց բարկութիւնը սառուցի պէս պաղ է, տաելութիւնը՝ դաժան, ձրդ-տումներն առանց ոգեսրութեան: Նրանք բոր-բոքուում են առանց տաքանա ու. դրանք նման են այն ժառերին՝ որ մի կողմից այրւում են, միւս կողմից՝ պաղ մնում:

Այդ մարդու բնաւորութեան զլխաւոր գիծը յամառութիւնն էր. դրանով նա պար-ծենում էր և իրան նապօլէոնի հետ համեմա-տում: Բայց այդ միայն ինքնախարէութիւն էր:

Այդ սխալմունքն ունեցող շատ մարդիկ կան՝ որ յամառութիւնը կամքի ոյժ են հա-մարում, մոմի բոցը՝ աստղի փալ:

Մէկ որ այդ մարդը մի անմիտ վճիռ կայացնէր՝ այլես ոչ մի կերպ չէր կարելի լեռ կանգնեցնել. նա գուռզ ինքնահաւանութեամբ կը տանէր մինչև վերջը՝ կարծելով որ դրանով իր կամքի ոյժը ցոյց կը տայ:

Յամառութիւն առանց խելքի—այդ կրբկ-

նակի յիմարութիւն է՝ որ մարդուն շատ հե-ռու կարող է տանել

Սովորաբար՝ երբ մեր զլխին որեւէ՝ մաս-նակի կամ հասարակական բնաւորութիւն ու-նեցող զգբախտութիւն է թափուոմ՝ նրա պատ-ճառները քննելով՝ համարեա միշտ այն եղրա-կացութեանն ենք դալիս, որ դա մի խելօք ու խոշոր մարդու արած չէ, այլ՝ պարզ է ի պարզ՝ որեւէ նեղ, ինքնահաւան, փոքրիկ միշակու-թեան, որ կոյր յամառութեամբ դիմել է իր նպատակին: Աշխարհումս այդ տեսակ ստա-հակների թիւը փոքր չէ. զրանք կարծում են՝ որ իրանք կոչւած են միւս մարդոց կեանքում վիճակ տնօրինողի դերը կատարելու:

Ահա թէ կլերփօ կենդրօնական բանտի իշխանաւորն ի՞նչ տեսակ մարդ էր:

Մէնք արդէն ասացինք՝ որ կլերփօ գա-լուց յետոյ՝ կլողը պարաւոր էր արհեստա-նոցում աշխատել: Արհեստանոցի կառավարիչը միքանի ժամանակ նրան հետեւելուց յետոյ՝ տեսաւ՝ որ հիսնալի աշխատաւոր է, ուստի և սկսեց հետը համեմատարար լաւ փարւել:

Մի անգամ երբ կլողը իր սովորութեան համեմատ տիրած սկսեց այն աղջկայ մասին մտածել, որին իր կինն էր համարում, կառա-վարիչը որպէս թէ՝ նրան մխիթարելու համար՝

պատմեց՝ որ այդ գժբախտ կինը պոռնիկ է  
դարձել:

Կլօզը սառնութեամբ հարցրեց—

— Իսկ ի՞նչ է եղել երեխան:

Այդ հարցին կառավարիչը ոչ մի պա-  
տասխան չկարողացաւ տալ:

Միքանի ամիս անցած՝ կլօդն ընտելա-  
ցաւ իր նոր շրջապատին և բար երևոյթին՝  
այլևս ոչ մի բանի մասին չէր մտածում։ Այն  
դաժան հանդարտութիւնը՝ որ բնաւորութեան  
յատկանիցն էր՝ նրա բոլոր տիսուր մաքերէն  
գերակշռից։

Այդ յամանակուայ ընթացքում նա իր  
ընկերների վրայ մի ինչ որ տարօրինակ ազ-  
գեցութիւն ծեռք բերեց։ Լուկեան համաձայ-  
նութեամբ՝ առանց իրանց որևէ հաշիւ տա-  
լու՝ բոլոր այդ մարդիկ նրանից էին խորհուրդ  
հարցնում, նրան էին լսում, նրան նմանում և  
երկրպագում էին։ Կլօզը իր կողմից դրա հա-  
մար ոչ մի ջանք չէր գործ դրել, այդ եղել էր  
ինընլստինքեան։

Այդ խելացի հայեացքի մէջ կար մի բան՝  
որն ակամայ իրան էր հպատակեցնում։ Մար-  
դու աչքերը պատուհան էն՝ որտեղից երևում  
են ուղեղում ծագած մաքերը։

Դաղափարներ ունեցող մարդկան մտցրէք

դաղափարից զուրկ մարդկանց մէջ և կը տես-  
նէք՝ թէ ի՞նչպէս քիչ ժամանակ յետով, ձգո-  
ղականութեան անյաղթելի օրէնքի հիման  
վրայ բոլոր խաւար ուղեղները հեղութեամբ  
կը գիծեն նրան, կ'աստուածացնեն նրան։ Մար-  
դիկ կան, որոնց մագնիսին մօտեցրած երկաթ  
կարելի է համարել։ Կլօդն այս գէպքում մագ-  
նիսն էր։

Այսպէս՝ երեք ամսուայ ընթացքում  
կլօզը բանտարկին արհեստանոցի հողին, օրէնքն  
ու կանոնը զարձաւ։

Ամենքն՝ ասեղի նման՝ կպչում էին նրան  
մագնիսին։

Յանախ նա ինքն էլ էր կասկածում՝ թէ  
արդեօք ինքն այսուեղ թագաւոր է, թէ մի  
խղճուկ բանտարկեալ։ Կարծես գերի պապը  
լինէր իր կարդինալներով։ Եւ ինչպէս առհա-  
սարակ միշտ լինում է ընկերներից սիրւած  
լինելուն պատճառով՝ բանտարկին իշխանու-  
թիւնների ատելութեանը մատնուեցաւ։ Զէ  
որ միշտ այդպէս է՝ եթէ հպատակներդ քեզ  
սիրում են՝ տէրդ սկսում է ատել։

Կլօզը շատակել էր.—այդ նրա օրգա-  
նիզմի յատկանիշն էր։ Նրա ստամոքսն այն-  
պէս էր կազմուած՝ որ երկու սովորական մար-

դուն բաւականացնող կերակուրք նրան հաղիւ  
կը կշացնէր:

Պարոն զէ-կօտաղիլլան նոյն տեսակ լաւ  
ախորժակ ունէր, բայց այդ նրա համար լոկ  
ծիծաղի աղբիւր էր: Այդ պարոնը իր շատա-  
կերութեամբ յալտնի հարուստ իսպանացի է:  
Բայց ինչ որ հինգնարիւր հազար զլուխ ոչ-  
խարի տէր իսպանացի աղնուականի համար  
ուրախութեան ու ծիծաղի աղբիւր կարող է  
լինել՝ հասարակ աշխատաւորի համար մի  
ժանր բեռ է, իսկ բանտարկեալի համար՝ ճշ-  
մարիտ դժբախտութիւն:

Երբ կլօգն ապրում էր իր վերնայար-  
կում և ազատ լինելով՝ ամրող օրն աշխա-  
տում էր, կարողանում էր ծեռք բեռել իր հա-  
մար անհրաժեշտ չորս ֆունտ հացը և կշտա-  
նում էր: Բայց բանտում օրական աշխատան-  
քի համար ֆունտ ու կէս հաց և քառորդ  
ֆունտ միս էր ստանում: Այդ էր նրա մշտա-  
կան անփոփոխ բաժինը և այդ պատճառով էլ  
նա բաղյած էր մնում:

Մի անգամ, երբ կլօգ Գէն կուլ տուեց  
իր սաղ բաժինը և նորից սկսեց աշխատել՝  
որպէս զի գոնէ աշխատանքի մէջ մոռանալ բաղ-  
ցը, իսկ միւս բանտարկեալները ուրախ զրու-  
ցելով զեռ ևս ուտում էին, նրան խեղճ, ար-

տաքինով թողլ մի պատահի մօտեցաւ: Զեռքին  
բռնած ունենալով մի զանակ ու իր բաժինը՝  
որին զեռ ևս չէր զիակել, երկիւզով կանգ ա-  
ռաւ, ըստ երեսյթին՝ ինչ որ ուզում էր ա-  
սել, բայց չէր համար ձակլում:

Այդ պատահին, նրա հացը և միսը ա-  
րին իրանց արժանաւոր տպաւորութիւնը  
կլօգի վրայ:

— Ի՞նչ ես ուզում, հարցրեց կլօգը:

— Որ ինձ մի ծառայութիւն անեք, ան-  
վստահ կերպով պատասխանեց պատահին:

— Ի՞նչ—գարձեալ հարցրեց կլօգը:

— Օգնիր, Ճաշս միասին ուտենք, մենակ  
ինձ համար շատ-շատ է:

Կլօգի հապարտ աչքերում արաւասունըներ  
փայլեցին: Նա վերցրեց դանակը, առաջար-  
կուած բաժինը երկու հաւասար մասի բաժա-  
նեց, մէկն իրան առաւ, միւսը տուեց պա-  
տահնուն,

— Շնորհակալ եմ, ասաց պատահին: Եթէ  
ուզում ես՝ ամեն օր այսպէս կընկերանանք:

— Անունդ ի՞նչ է, հարցրեց կլօգը:

— Սլքին:

— Այսուեղ ինչի՞ն բերել, շարունակեց  
քննել կլօգը:

— Գողութիւն եմ արել:

— Ես էր, ասաց կողք:

Եւ այդ օրուանից, ճիշտ որ՝ նրանք ամեն օր բաժանում էին Ալբինի ճաշը: Կողք երեսունևվեց տարեկան էր, բայց շատ անգամ նա լիսուն տարեկանի տպաւորութիւն էր թողնում—այդքան ծերացնում էին նրան մըտածմունքները: Ալբինը քսան տարեկան էր, բայց տեսքով՝ տասննեօթից աւելի չէր—այդքան անմեղութիւն էր արտացոլում այդ գողի աչքերում: Այդ երկու մարդկանց մէջ մի սերտ բարեկամութիւն հաստատեց, բարեկամութիւն՝ որ աւելի շատ հօր ու որդու յարաբերութեան էր նման, քան եղբայրների: Ալբինը համարեա զեռ ևս երեխալ էր, կոդ Գէն համարեա արդէն ծերունի:

Երկուսն էլ միենոյն արհեստանոցում էին աշխատում, միենոյն փականքի տակ էին քընում, միենոյն բակում էին զբոսնում և միենոյն հացն ուտում: Մէկը միւսի մամար մի ամբողջ աշխարհ էր: Երեսում էր՝ որ նրանք միասին երջանիկ էին:

Մենք արդէն արհեստանոցի կառավարչին ճանաչում ենք: Բանտարկեալների կողմից առուած լինելով՝ այդ մարդը յանախ նրանց հնագանդեցնելու համար դիմում էր կողի օգնութեանը: Շատ անգամ էր պատահել՝ որ

էր անհրաժեշտ էր լինում որևէ խռովութիւն, ապստամբութիւն խաղաղեցնել՝ կողի անանուն ու զաղանի հեղինակութիւնը իշխանաւորի պաշտօնական հեղինակութիւնը օգնութեան էր հասնում:

Խակապէս բանտարկեալներին հանգստացնելիս կողի տասման սասր խօսքն աւելի մեծ գործ էին կառարում՝ քան տասր ժանդարմը: Եւ կողք շատ անգամ էր այդպիսի օգնութիւն արել կառավարչին: Եւ կառավարիչը հէնց այդ բանի համար ատեց այդ գողին: Նրան նախանձում էր: Հոգու խորքում նա պահում էր մի զաղանի, խիստ ատելութիւն դէպի կողը: Իրաւունքով, պաշտօնական իշխանաւորի ու կառավարչի ատելութիւն դէպի խակական իշխանաւորն ու կառավարիչը, կոպիտ ոյժի վրայ հիմնուած իրաւունքի ատելութիւնը դէպի հոգեկան ոյժի վրայ հիմնուած իրաւունքը:

Եւ այս տեսակ ատելութիւնը ամենասարսակին է:

Կողը Ալբինին սիրում էր և կառավարչի վրայ ըիչ էր ուշադրութիւն զարձնում: Մի անգամ Ալբինին կանչեցին կառավարչի մօտ:

— Ինչի՞ն են կանչում, հարցրեց կողը:

— Զգիտեմ, պատասխանեց Ալբինը:

Կէս օր անցաւ, իսկ Ալբինը դեռ չըր վերագարծել: Կլոզը յոյս ունէր նրան ճաշի ժամանակ պատահելու, բայց չը պատահեց: Վերագարծան աշխատանքի - դարձեալ չկար: Եղբ երեկոյեան բանատրկեալներին բերին ննջարանը՝ Կլօն աչքի անցրեց ամենքին, բայց իր բարեկամին չը գտաւ: Հաւանական է՝ որ նա այդ ըստէին խիստ տանջւում էր, որովհետև՝ իր սովորութեան հակառակ՝ խօսեց պահապանի հետ:

— Մի՞թէ Ալբինը հիւանդ է, հարցրեց նու:

— Ո՞չ պատասխանեց պահապանը:

Բայս այսօր ամքող օրն ո՞ւր է:

— Նրան ուրիշ բաժանմունք են փոխադրել, անփութութեամբ պատասխանեց պահապանը:

— Սակայն՝ նա հանգստութեամբ հարցրեց:

— Իսկ ո՞վ բարեհանեց այդպիսի կարգավորութիւն անել:

— Պարոն կառավարիչը, պատասխանեց պահապանը:

Հետեւեալ ամբողջ օրն էլ, ինչպէս և նախորդին՝ Կլօզը Ալբինին չը տեսաւ:

Երեկոյեան՝ աշխատանքները զադարեցնելուց առաջ՝ կառավարիչը իր սովորութեան համեմատ այցելեց արհեստանոցը: Կլօզը հեռութից նրան նկատեց թէ չէ՝ վերցրեց թաղիքէ վիխարկը և կոճկեց վերնազգեստը: Այդ շտապ սիրալիրութեամբ նա ուզեց իր առանձին յարդանքը յոյց տալ իշխանաւորին, որպէս զի իրան ողորմածութեամբ վերաբերին—այդպէս է հրամայում բանատին սովորութիւնը:

Այսպէս՝ բաց զլխով՝ կոճկած վորնազգեստը Կլօզը իր տեղում սպասողական զիրք բռնեց:

Կառավարիչը մօտեցաւ:

— Տէր, զիմեց նրան Կլօզը:

Կառավարիչը երեսը նրան դարձրեց:

— Ճիշտ է, տէր, որ Ալբինին ուրիշ բաժանմունք էր փոխադրել:

— Այս, պատասխանեց կռավարիչը:

— Լսեցէք, տէր՝, շարունակեց Կլօզը, Ալբինն ինձ խիստ պէտք է, անհրաժեշտ է, Դուք էլ զիահէք՝ որ սովորական բաժինն ինձ չի բաւականանում և Ալբինը իր հացի կէսն ինձ էր տալիս:

— Այդ նրա գործն էր, պատասխանեց կառավարիչը:

— Տէր, միթէ կարելիութիւն չկայ նրան  
մեր բաժանմունքը վերադարձնելու:

— Ո՞չ մի գէպօւմ: Այդ արգէն վը-  
ճուուած է:

— Ո՞վ է վՃռել:

— Ես:

— Պարոն կառավարիչ, նորից սկսեց  
կօղը. — այդ ինձ համար կետնքի ու մահուան  
խնդիր է և այդ խնդիրը այսպէս կամ այն-  
պէս վճռելը ձեղանից է կախուած:

— Ես երբէք իմ վճիռս չեմ փոխում:

— Միթէ ես ձեզ որեէ վատութիւն եմ  
արել:

— Ո՞չ:

ել ինչու էք ինձ Ալբինից բաժանում:

— Անպէս, վրայ բերեց կառավարիչը  
հանդարտութեամբ:

Այս բացատրութիւնը բաւական համա-  
րելով՝ կառավարիչը հեռացաւ:

Կօղը լուութեամբ գլուխը քաշ զցեց:

Եւ ընդհանրապէս՝ նրա մէջ ոչ մի առան-  
ձին փոփոխութիւն չէր նկատում: Ընկերնե-  
րից ոչ մէկի հետ Ալբինի մասին չէր խօսում:  
Հանգստութեան ժամերին նա միշտ մենակ էր  
ման գալիս և միշտ էլ քաղցած էր: Փոփո-  
խութիւնն այդ էր:

Մինչդեռ՝ նրան լաւ ճանաչող մարզիկ  
նկատում էին մի ինչ որ մռայլ ու ծանր վիշտ՝  
որ աւելի ու աւելի զծագրուում էր նրա գէմ-  
քին: Բայց զէպի ընկերները նա աւելի քնքր-  
շութեամբ սկսեց վերաբերւել քան առաջ: Նր-  
րանցից շատերն էին առաջարկում իրանց բա-  
ժնի մի մասը, բայց կօղը ժպատակ հրաժար-  
ուում էր:

Կառավարչի հետ ունեցած բացատրու-  
թիւնից յետոյ՝ կօղը ամեն երեկոյ անում էր  
իր նման լուրջ մարդու համար չափազանց  
տարօրինակ մի բան. այն ժամանակ՝ երբ կա-  
ռավարիչն անցնում էր նրա մօտից՝ նա աչ-  
քերը յամառութեամբ սկսում էր նրա վրայ  
և սրախ կսկիծ ու դառնութիւնն, աղերսանք  
ու սպառնալիք արտայալտող ձայնով կրկնում  
էր միայն այս երկու խօսքը, «իսկ Ալբինը»:

Բայց կառավարիչը չը լսել էր ձեւա-  
ցնում կամ ուսերը թօթուելով հեռանում էր:

Նրա այդպէս վարուելն արդարացի չէր  
և այդ լուրջ տեսարաններին անձնատես եղօղ-  
ների համար պարզ էր՝ որ կօղը մի ներ-  
քին հաստատուն վճիռ է կայացրել: Ամբողջ  
բանար երկիւղով սպասում էր թէ ի՞նչպէս  
կը վերչանայ յամառութեան և վճռականու-  
թեան մէջ սկսւած այդ մարդը:

՚ի միջի այլոց՝ պատճում էրն որ մի անգամ նոյնիսկ այսպիսի մի բան ասաց կլողը կառավարչին.—

— Հսեցէք, տէ՛ր, վերադարձրէք ընկերոջս. այդպէս լաւ կը լինի: Աչքի առաջ ունեցիք, ձեզ նախազգուշացնում եմ:

Մի կիրակի օր, երբ նա մի քանի ժամ անշարժ նստած էր քարի վրայ և մտածում էր, ընկերն երից մէկը՝ ֆայտ անունով, ծուեցաւ և ծիծաղելով հարցրեց.

Շը, էտ ինչի՞ մասին ես մտածում:

Կլողը զլուխը բարձրացրեց և ժանրութեամբ ասաց.—

— Մի մարդու դատի եմ նախարկում:

1831 թուի հոկտեմբերի 25-ին, երբ կառավարիչն իր սովորական ակցին էր եկել՝ կլողը աղօնուկով մի ապակու կտոր չարգեց. կառավարիչը նրան հարցրեց աղօն կի պատճառը:

— Ոչինչ, այդ ես էի. յատնեց կլողը: Պարօն կառավարիչ, վերադարձրէք ընկերոջս:

— Անկարելի է, եղաւ անդրդուելի պատասխանը:

— Բայց այդ անհրաժեշտ է, ասաց կլողը հանգարտ և ծանր, և ուզգակի կառավարչի աչքերին նայելով՝ տւելացրեց.— Ժինչե նոյնեւ-

բերի չորսը ձեղ մտածելու ժամանակ եմ տալիս. այսօր հոկտեմբերի 25-ն է:

Վերակացուներից մէկը կառավարչին նրկատեց՝ որ այդ խօսքերի համար կլողին պէտք է պատժել:

— Ի՞նչ հարկաւոր է պատժել, արհամարհական ժպտով պատասխանեց կառավարիչը, սրանց հետ պէտք է աւելի բարութեամբ վարւել:

Միւս օրը բանտարկեալ Պերնօն մօտեցաւ կլողին, երբ վերջինս մտածմունքների մէջ խորասուզում՝ թափառում էր, և հարցրեց.—

— Ինչի՞ մասին ես մտածում, կլող:

— Վախենում եմ որ մեր բարի կառավարչին մի բան պատահի այս մօտ ժամանակներս:

Հոկտեմբերի 25-ից մինչե նոյնեմբերի 4-ը ամբողջ 9 օր անցաւ: Կլողը ամեն օր լիշեցնում էր կառավարչին թէ ինչ յուստհատ զրութեան մէջ է ծղել իրան Սլբինի հետ անշատուած լինելը:

Հասաւ նոյնեմբերի 4-ը. Այդ օրը կլողի կէմըն այնպէս պարզ ու խողաղ արտայալառութիւն ունէր՝ որ վազուց է չէր պատահել: Տեղից վեր կացաւ և սկսեց իր սորքերի տակ դրած սնդուկը բրբըլ: Այնաեղ նրա խղճուկ

ակրողութիւնն էր պահած։ Այնտեղից նա ձի մկրատ հանեց՝ որը իր սիրած կնոշ, իր երեխի մօր սեփականութեան մնացորդներից էր։

Ցանցով ժամկուած մի պատուհանի մօտից անցնելիս՝ որտեղից բանտարկեալ ֆերրարին դուրս էր նայում։ Կլօդը ցոյց տալով փոքրիկ մկրատն, ասաց.

— Տե՛ս, այս երեկոյ սրանով այդ հաստ ցանցը պէտք է կտրեմ։

Ֆերրարին թերահաւասառթեամբ նրան նայեց և ծիծաղեց, ծիծաղեց և կլօդը,

Այս առաւօտ նա աւելի եռանդով էր աշխատում՝ քան երբեցիցէ։ Նա մտաղիր էր անպատճառ վերջացնել ծգօտի զլիսարկը, որ պատուել էր աղնիւ բաղաքացի թրեսիէն և փողը կանխիկ վճարել։

Ճաշից առաջ՝ նա մի պատճառ բռնելով՝ գնաց ներքին արհեստանոցը՝ հիւսների բաժանմունքը։ Այսաեղ էլ նա սիրուած էր ու յարգուած, բայց շուտ շուտ չէր դալիս։

— Տեսէք, տեսէք, կլօդն ևկել է։

Այսպէս խօսելով՝ նրան շրջապատեցին. դա մի կատարեալ տօն էր։ Կլօդը մի հայեաց. բով աչքի անցրեց ամբողջ սենեակը—պահապաններից ոչ մէկն այնտեղ չէր։

— Զեղսնից ով կարող է տալ ինձ իր կացինը, հարցրեց նա։

— Ինչի՞, խօսեցին ամեն կողմից, ի՞նչ պիտի անես։

— Վճռել եմ այս երեկոյ մեր կառավարին սպանել, պատասխանեց նա։

Ամեն կողմից նրան կացիններ առաջարկեցին։ Նա ընտրեց ամենափոքը և ամենասուրը և շալփարի մէջ թաղցնելով՝ գոճրս դնաց։ Տիւսների բաժնում քսանեհօթը հողի էրն աշխատում, բայց խնդրել պէտք չէր որ կլօդի տամածը դաղտնի պահէին։ Ամենքը լրսել էին։

Նոյնիսկ իրար մէջ այդ դէպքի մասին չէին խօսում։ Ամենքն սպասում էին գալիքին։ Գործը սարսափելի, բայց և հասարակ ու պարզ էր։ Մտածելու շատ բան էլ չկար։ Կլօդին խորհուրդներ չէր կարելի տալ, մանաւանդ անկարելի էր մատնել նրան։

Մի ժամ անցած՝ նա խօսում էր մի փոքրահասակ բանտարկեալի հետ, որն անդորք թափառում էր բակում։ Կլօդը նրան խորհուրդ տուեց զրել-կարդալ սովորել։ Այդ ժամանակ նրան մօտեցաւ ֆայտը և հարցրեց՝ թէ ի՞նչ է պահած շպիլարում։

— Այս կառավարչին սպանելու համար կացին է: Միթէ երեսում է:

— Քիչ երեսում է:

Օրուայ մնացորդը սովորականի պէս անցաւ: Երեկոյեան ժամը 7-ին բանտարկեալներին փակեցին արհեստանոցներում և սովորութեան համեմատ՝ վերակացուները հեռացան կառավարչի ալցելութիւնից յետոյ վերադառնալու համար: Կլօզը լնկիրների հետ փակուած մնաց իրանց արհեստանոցում և այստեղ կատարւեցաւ մի եղակի, վեհութեամբ ու սարսափով լի մի տեսարան:

Վերակացուների գուրս գնալուց յետոյ՝ կլօզը աթոռին բարձրացաւ և ընկերներին յախտարարեց որ ասելիք ունի: Ամենքը լուեցին:

Կլօզը բարձր ծախով սկսեց.

— Ամենքդ գիտէք՝ որ Ալբինը ինձ համար եղաւայր էր: Գիտէք նոյնպէս՝ որ այստեղ ստացածս սովորական բաժինն ինձ չէր բաւականանում: Նոյնիսկ աշխատածս զրօշներով հաց գնելով՝ ես այնուամենալինիւ՝ չէի կշանում: Ալբինն իր բաժնի կէսն ինձ էր տալիս և ես նրան մտերմացալ սկզբում նրա համար՝ որ ինձ կերակրում էր, իսկ յետոյ՝ նրա համար՝ որ ինձ սիրում էր: Կառավարիչը մեղանջատեց: Իսչու: Նրա համար շատ հեշտ էր

մեղ միասին թողնելը, բայց նա չար մարդի ինելով՝ ուրիշների տանջանքից նա բաւականութիւն է ստանում: Ես մի քանի անգամ ինդիրեցի՝ որ Ալբինը յետ բերէ: Դուք տեսաք՝ թէ նա իմ իննդիրներին ի՞նչպէս էր վերարերուում: Նրան մինչեւ նոյեմբերի 4-ը ժամանակ տուի, պատասխանի փոխարէն՝ նա ինձ պատժեց: Այդ ժամանակուայ ընթացքում ես նրան դատում էի և մահուան վճիռ կայացրի: Այսօր նոյեմբերի 4-ն է: Երկու ժամ յետոյ նա այստեղ կը լինի: Զեղ նախազգուշացնում եմ՝ որ նրան պէտք է սպանեմ: Արդեօք ոչ ոք սրա դէմ ոչինչ չունի:

Պատասխանը խուլ լռութիւնն էր:

Կլօզը շարունակեց: Նա հաղուաղիւա Ճարտարութեամբ ու պարզութեամբ էր խօսում՝ որ նրա յատկանիշն էր: Նա յախտարարեց՝ որ հիանալի կերպով հասկանում է իր վճռի ամբողջ արբանիքը, բայց իրան կատարելապէս արգար է գտնում: Ութսունեմէկ ընկերների խղճին զիմելով՝ նա հետեւեալ եղրակացութիւններն էր առաջարկում:

«Որ իրան համբերութիւնից դուրս են բերել»:

«Որ կան գրութիւններ, երբ սեփական դասը միակ ելքն է:

« Ինքը շատ լու հասկանում է և գիտակցում՝ որ կառավարչին սպանելու համար սեփական կեանքը պէտք է զոհէ։ Բայց չի ափսոսում իր կեանքին՝ քանի որ արդար դործի համար է զոհում։

« Թէև անկարելի է համարում՝ որ ինքը վճռական բովէին կարող է տատանուել, սակայն՝ խնդրում է ընկերներին՝ որ այգիսի դէպքերում իրան սիրտ տան։

« Ազնուութեամբ թուելով իր փաստերը իր համար յարգելի մարդկանց առաջ՝ նա մի անդամ ևս զրինում է, կառավարչին սպանելուց զատ՝ ուրիշ ելք չէ դանում, բայց եթէ նրանցից որևէ մէկը ասելիք ունի այդ առմիւ՝ պատրաստ է լսելու։»

Ընկերներից միայն մէկը գտնուեց՝ որ խօսել ցանկացաւ. նա ասաց՝ որ նախ քան սպանելը՝ կլօղը մի անդամ ևս պէտք է փորձէ նրան համոզել։

— Այդ արգարացի է, պատասխանեց կլօղը և ևս ալլագէս էլ կանեմ։

Ժամը 8-ն էր։ Կառավարիչը պէտք է 9-ին դար։

Տեսնելով՝ որ այս տարօրինակ վճռաբեկ ատեսնը հաստատեց իր վճիռը՝ կլօղը դարձեալ հանգստացաւ։ Նա սեղանի վրայ դարսեց

վր բոլոր կարողութիւնը—սպիտակեղենը և հագուստը և իր սիրած ընկերներից մէկին կամ միւսին կանչելով՝ բոլորը նրանց բաժանեց, իսկ իրան միայն մկրտար թողեց։

Յետով նա բոլորի հետ համբուրուեց, ըստ որում՝ մի քանիսն արտասուեցին։ Իսկ կլօղը նրանց ժպառում էր։

Այդ վերջին ժամին նա այնպէս հանդարտ ու ուրախ էր խօսում՝ որ ընկերներից շատերը, ինչպէս ցոյց առւին գատարանում քննութեան ժամանակ՝ խիստ կասկաժում էին, որ կլօղը կիրագործէ իր վճիռը։

Սմբողչ ժամանակ մի երիտասարդ բանտարկեալ աչքը չէր հեռացնում կլօղից։ Դրժգոյն, նա կանգնած էր և սպասողական դրութեան մէջ՝ զողում էր։

— Սէրտ առէք, ընկեր, բաղցըութեամբ ասաց կլօղը. չէ՞ որ այս բոլորը մի բոպէի բան է։

Ի, չուլ-փալասները բաժանելուց յետոյ՝ կլօղը մի անգամ ևս բոլորի ձեռքը սեղմեց և սպահրամայից՝ որ ամենը ըործի կանգնեն։ Ինքն էլ նստեց իր տեղը։ Սմենքն սպասում էին։ Վճռական բոպէն մօտենում էր։ Ժամացոյցը 9-ը խփեց։ կլօղը ասաց։

— Մի բառորդ ժամ մնաց։

Ապա տեղից վեր կացաւ, մօտեցաւ գուանն  
ու յարմար գիրք բռնեց: Նրա դէմքը բոլորո-  
վին հանգիստ էր: Գուուր բացուեց և կառա-  
վարիչը ներս մտաւ:

Ոչ մի ժայն, ոչ մի ծպտուն չը բարձրա-  
ցաւ, կարծես ալստեղ կենդանի մարդիկ չէին,  
այլ բարէ արձաններ:

Սովորութեան համեմատ՝ կառավարիչը  
մենակ էր: Նա սովորական նընարաւական  
ու անխողող կերպարանքով ներս մտաւ ա-  
ռանց նկատելու դռան մօտ կանգնած կլօղին՝  
որ աշ ձեռքը զրպանն էր զրել: Նա արագու-  
թեամբ անցաւ բանտարկեալների մօալից աշ  
ու ձախ արհամարհական հայեացը ձգելով և  
կիսատեխսատ խօսքեր արտասանելով, առանց  
նկատելու՝ որ բոլոր շրջապատողների հայեաց-  
քը նոյն սոսկալի միտքն էր արտայտալում:

Յանկարծ իր յեակը բայլեր լսելով՝ զար-  
մացած յետ գարծաւ:

Այդ կլօղն էր, որ լոռութեամբ հեակում  
էր նրան:

— Ալստեղ ի՞նչ ես անում, բարկացած  
հարցրեց կառավարիչը: Լսում ես, ինչո՞ւ տե-  
ղումդ չես:

Բանտարկեալը մարդ չէ, ուստի և նրա  
հետ «զու»-ով են խօսում:

— Զեղ հետ խօսելու բան ունեմ, պարո՛  
կառավարիչը յարգանքով պատասխանեց կլօղը:  
— Ի՞նչ բան:;  
— Ալբենի մասին:  
— Դարձեալ և միշտ, ասաց կլօղը:  
— Երեկի պատիժով քիչ էր, հարցրեց կա-  
ռավարիչը և շարունակեց առաջ գնալ:  
— Պարօն կառավարիչը վերադարձրէք  
ընկերոջս:

— Անկարելի է

Պարօն կառավարիչը, խօսեց կլօղն այն-  
պիսի ձայնով՝ որ նոյնիսկ զեին կարող էր  
լուզել, աղաչում եմ, վերագարծրէք Ալբինին,  
կը աեսնէք՝ որ ալդ բանի համար կաշխատեմ  
ամեն կերպ երախտագիտ լինել ձեզ: Որպէս  
ազատ մարդ՝ զուք զգիտեք թէ ի՞նչ է նշա-  
նակում ընկեր, բարեկամ ունենալը: Այդ ձեզ  
համար միւնոյն է, բայց ես՝ բացի բանակ-  
չորս պատից՝ ալստեղ ոչոք և ոչինչ չունեմ:  
Դուք ուր ուզէք, կարող էք զնալ, ի՞նչ ու-  
ղէք՝ կարող էք անել, բայց ես միայն մի Ալ-  
բին ունեմ, վերագարծրէք նրան: Միթէ ձեզ  
համար միւնոյն չէ թէ մի սենեակում երկու  
մարդ կը լինեն՝ մէկի անունը Ալբին, միւսինը՝  
կլօդ: Բոլոր խնդիրս այդ է: Դրանից հեշտ

ի՞նչ բան կալ: Պառոն կառավարիչ, բարի կառավարիչ, ՚ի սէր Աստուծոյ՝ աղաշում եմ ձեզ:

Երեխ այսքան երկար կլօղը ոչ մի ժամանակ ոչ մի բանապետի հետ չէր խօսել: Նա շունչը բռնեց և պատասխանի էր սպասում: Կառավարիչը դժկամակութեամբ ու անհամբերութեամբ նրան պատասխանեց:

— Անկարելիէ, միենոյն բանը Քեղ քանի անդամ պիտ ասեմ: Այլևս զրա մասին չը խօսես. ինձ ձանձրացրիր:

Այս ասելով՝ նա քաղերն արագացրեց: Կլօղը հետեւում էր նրան: Այդպէս՝ նրանք հետեւալ դռանը հասան: Ութսուն մարդ՝ շունչ կտրած՝ նրանց էին դիտում:

— Գոնէ ասացէք՝ թէ ինչո՞ւ համար էք ինձ մահուան դատապարտում: Ասացէք, նրան ինչո՞ւ ինձնից խլեցիք:

— Ես քեզ արգէն ասացի, անվրդով կերպով ասաց կառավարիչը, հէնց անպէս: Եւ մէջը դարձնելով դէպի կլօղը՝ ուզում էր դուրս գնալ:

Կառավարչի վերջնական պատասխանը լսելով՝ կլօղը մի քաղլ յետ դնաց: Վաթսուն անշարժ արձանները տեսան՝ թէ ինչպէս նա կացինը հանեց: Նրա աչ թեր վեր բարձրացաւ և կառավարիչը մինչև մի ճիչ արծակեց

մէկը միւսի յետեկից երեք ուժեղ հարուած տեղաց նրա գանքի միենոյն տեղին: Բնկած ժամանակ՝ չորրորդ հարւածը նրա զէմքը վիրաւորեց, իսկ յետոյ՝ կատաղութիւնից իրան կորցնելով՝ կլօղը մի աւելորդ հարւածով չախչախեց նրա աղղորը:

Կառավարիչն արգէն մեռած էր: Այդ ժամանակ կլօղը ձգեց կացինը և զոռաց.

— Այժմ միւսին:

Այդ միւսն ինքն էր: Ամենըը տեսան՝ թէ ինչպէս նա զրպանից հանեց «իր կնոշ» մկրատը և առանց որևէ մէկի կողմից զիմազրութեան հանդիպելու՝ միեց իր կուրծքը:

Մկրատը կարճ էր, կուրծքը խորը: Միքսան անդամ նա կրկնեց իր փորձը զոռալով.

— Անիծւած սիրտ, վերչաղէս ե՞րբ պէտք է քեզ գանձեմ:

Եւ այստեղ նա՝ զիտակցութիւնը կորցնելով՝ արեւան մէջ լողալով՝ ընկաւ կառավարչի զիտակի վրայ:

Այդ երկուսից ո՞րն էր զո՞հը:

Երբ կլօղը զարթնեց, տեսաւ որ փաթաթած անկողնում պառկեցրած է: Նրա զիսի վերել նստած էին զթութեան քոյթեն

ու քննիչը՝ որը մեծ հոգասարութեամբ նրա  
առողջութիւնը հարցրեց:

Կօղը շատ արիւն էր կորցրել, բայց այն  
ձկրասլր, որով ձիամտաբար ուզեցել էր իրան  
սպանել՝ վատ էր կատարել իր համար նշա-  
նակուած դերը: Հասցրած հարւածներից ոչ  
մէկը կօղի կեանքի համար վտանգաւոր չէին:  
Մահացու էին միայն կառավարչի զլիսին տե-  
ղացող հարւածները:

Քննութիւն սկսւեց: Առաջին հարցն էր՝  
թէ արդեւք նաև է սպանել կլերփո բանտի ար-  
հետանցների կառավարչին: Պատասխանը  
եղաւ.

— Այո՞ս: Նրան հարցրէն.

— Ինչու:

— Հէնց այնպէս, պատասխանեց նա:

Սակայն՝ շուտով վէրքերը նորից բացուե-  
ցին. նա տենդի մէջ ընկաւ. մահը սօտ էր:

Չորս ամիս հազիւ պառկեց հիւանդանո-  
ցում: Բժիշկներն ու դատաւորները եռանդով  
դործում էին. մի քանիսը վէրքերն էին բու-  
ժում, միւսները՝ կախաղան պատրաստում:

Կարճ խօսենք: 1832 թուի մարտի 16 ին,  
վերջապէս կօղն այնքան կազմուրուեց՝ որ  
կարող էր դատարան ներկայանալ: Ամբողջ  
բաղաքը հետաքրքրում էր այդ դործով. դա-

տաստանական դահլիճը լիբն էր հոժքաղմու-  
թեամբ:

Երբ սկսւեց դործի քննութիւնը՝ ի զար-  
մանս դատաւորների՝ յանցագործութեան ա-  
կանաւեններից ոչ մէկը չէր ուզում կօղի դէմ  
յուցումներ անել: Իզուր էր նախագահը սպառ-  
նում նրանց: Ամենքը յամառութեամբ լոել  
էին: Ալդ ժամանակ կօղն ինքը հրամակեց  
պատմել դործի էութիւնը առանց քաշովելու  
և ամենքի լեզուն բացուեց: Կօղը նրանց մէմ  
ուշագրութեամբ էր լսում: Երբ վկաններից  
որեւէ մէկը մոռացութեամբ կամ նրան օգնե-  
լու դիտաւորութեամբ աղաւաղում էր գէպ-  
քերը՝ նա խօսին ընդհատում էր և ճշմար-  
տութիւնը վերականգնում:

Այսպէս՝ մէկը միւսի յետերից ֆակդերի  
մի ամբողջ շարք, պարզուեց, որոնք մեզ ար-  
դէն յայտնի են:

Վայրկեաններ էին լինում՝ երբ ներկայ  
եղող կանալը արտասում էին: Կանչեցին և  
Ալբինին: Նա էլ սէտք է յուցումներ անէր:  
Նա հազիւ էր կարողանում կանցնել և երե-  
խի նման հեկեկում էր: Նա ընկաւ կօղի  
զիրկը և ժանդարմները չկարողացան նրան  
խանդարել: Կօղը բարձրացրեց նրան և ժրպ-  
տալով սսաց դատախաղին. «Ահա այն չարա-

գործը որ իր բաժին հացը քաղցածներին էր տալիս»։ Եւ նա համբուրեց Ալբինի ձեռքը։

Երբ վկաների հարցութիւնը վերջացաւ՝ դատախազը ոտքի կանգնեց և մօտաւորապէս հետեւալն ասաց։

— Պարօնայք երդուեալ դատաւորներ, հասարակութիւնը կը ցնցուէր իր հիմքերով, նրա օրինաւոր կեանքը կը խորակուէր, ևթէ օրէնքը չը հալածէր այն տեսակ մեծ ու սուկալի չարագործներին ինչպէս...» և այլն։

Այս նշանաւոր ճառից յետոյ կօգի փաստաբանը խօսեց։ Այն բոլորը՝ որ սովորաբար ալսպիսի գէպը երում ասւում է յօդուտ կամ ՚ի վնաս ձեղագրեալին՝ ասւեց։ Բայց կօգի կարծիքով մի քանի բան բաց էր թողած, ուստի և իր հերթում ոտքի կանգնեց։ Նա այնքան լաւ էր խօսում՝ որ բոլոր ներկայ եղող ինտելիգէնտների վրայ ամենահիանալի տպաւորութիւն թողեց։

Դա հոետորի ճառ էր և ոչ թէ մի անգրագէտ, խեղճ արհեստաւորի։ Նա ամբող ժամանակ կանգնած էր խօսում, յուղւած ձայնով, ողերորւած, վեհութեամբ, բաց ու համարձակ հայեացըն ուղղած ամենքի վրայ։ Նա ամեն ինչ պատմեց այնպէս, ինչպէս եղել էր, լուրջ, պարզ, առանց որևէ բան թուլացնելու

կամ չափազանցնելու, խոստովանում էր ամեն ինչ առանց պատասխանաւութիւնից խոյս տալու ծգառումի։ Շատ տեղ նա հմուտ ձարտարախօս հոետորի պատաւորութիւն էր թողնում և ամբողչ հասարակութիւնը յուղւած հետեւում էր նրա ամեն մի խօսքին, կամացուկ կրկնում էր նրա միքանի դարձուածքները։ Գահիթնում շշուկ էր տարածւում՝ երբ կլօղը կանգ էր առնում շունչ բաշելու և կրպարտ հայեացը ծգում էր շշապատին։ Յանձնախ այդ անգրագէտ արհեստաւորը իր խօսկցութեան ժամանակ այնքան նուրբ, այնքան քաղաքավարի էր արտայայտում իր մրտքերը՝ որ նրան կարելի էր կատարեալ կրթութիւն ստացած ինտելիգէնտ համարել։ Անսովոր համեստութեամբ, ուշագիր կերպով նա տրւեց զարոյթի զգացմունքին երր գտափաղը կարծիք լայտնեց՝ որ կլօղը սպանել է իր իշխանաւորին վերջինիս կողմից առանց որևէ բռնութեան փորձի, հետեւալիս և առանց առիթի։

— Ի՞նչպէս, կոչեց կլօղը, ևս առիթ չունեմ։ Այս, այս, հասկանում եմ ձեր ասելքը։ Երբ որևէ մէկը հարրած ժամանակ ինձ խփում է և ես նրան սպանում եմ—ալդուեղ, իհարկէ՝ առիթ ունեմ. դուք ամենքդ գէպ ինձ

զիջողաբար էք վերաբերւում և մահուան փոխարէն տաժանակիր աշխատանքի էք դատապարառում: Խսկ մի մարդ ամբողջ չորս տարի շարունակ կատարեալ զիտակցութեամբ ինձ ստորացնում է, կրծում, տանջում է սիրտս, և այդ ամբողջ չորս տարւայ ամեն մի օրը, ամեն մի ժամը, ամեն րոպէ ինձ տանջում է ամենախիստ կսկիծներով,—այդ գէպքում ի՞նչ կասէք: Ես մի կին ունէի—որի համար գողութիւն արի—նա ինձ տանջում է, յիշեցնելով այդ կնոջ կորչիլը, մի երեխայ ունէի—որի համար գողութիւն արի—նա ինձ տանջում է այդ երեխի անունով: Ես հաց չունեմ, գտնրում է մի բարեկամ՝ որ ինձ հաց է տալիս, սովոր աղատում է—նա այդ բարեկամիս ինձնից խլում է: Ես աղաչում եմ նրան որ վերաբարձնէ բարեկամիս—զրա համար նոտ ինձ պատժի է ենթարկում: Ես այդ ոստիկանական լրտեսի հետ քաղաքավարութեամբ եմ վարւում՝ նա ինձ մարդու տեղ չէ զնում: Ես ասում եմ նրան՝ որ ինձ տանջանք է պատճառում, նա պատասխանում է՝ որ ես իրան ծանծրացրել եմ: Ես ուրիշ ի՞նչ էի կարող անել: Եւ սպանեցի: Լաւ, թող ես հրէշ լինեմ, թող որ այդ մարդուն առանց առիթի սպա-

նաժ լինեմ—զրա համար զլուխս կտրեցէք. արէք՝ ինչ որ ուզում էք:  
Հակածառութիւնները վէրշանալուց յետով դատարանի նախագահը հետեւեալ անկողմնապահ և պարզ եզրակացութիւնն արեց. դատապարտեալը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի կատարեալ բարոյական հրէշ: Նրա կեանքն ու գործերը միայն զզուանք են պատճառում մարդուն և նա խիստ պատժի է արժանի: Սկսէնք արդեօք այնտեղից՝ որ նա անկանոն կենակցութեամբ ապրում էր մի ինչ-որ պոռնիկ կնոջ հետ, յետոյ՝ գողութիւն արեց, վերջը՝ մարդասպանութիւն: Այդ, պարոն, անհերքելի փաստեր են որոնց բացատրելու և գնահատելու կարիք չկայ:

Ընթերցողները թող իրանք մտածեն՝ ծիշտ որ այդ այլպէս էք: Սական՝ շարունակնք պատմութիւնը:

Նախ քան երգուեալ դատաւորներին խորհրդի ուղարկելը՝ նախագահը զիմեց ձեղագրեալին և հարցրեց՝ արդեօք նա իր կողմից ոչինչ չունի ասելու:

— Երկու խօսք, ասաց կլօղը: Շատ լաւ, ես գող եմ, մարդասպան եմ, զողութիւն եմ արել, մարդ եմ սպանել: Բայց ինչու եմ զողութիւն արել, ինչու եմ մարդ սպանել: Պա-

բոնալք դատաւորներ, այս հարցերն էլ քըն-նեցէք:

Քառորդ ժամ խորհրդակցելուց յետոյ՝  
տասնուերկու երգուեալ դատաւորները կօդ  
Գէ ին միաձայն մահուան դատապարտեցին:

Կօդ Գէ ի ներկայութեամբ կարդացին  
նրա մահուան դատավճիոր. նա միան ասաց.

— Այդ ամենը հիանալի, բայց ինչո՞ւ է  
այդ մարզը զողացել, ինչո՞ւ է սպանել, այս  
հարցերի պատասխանը դեռ չէք տուել:

Դատից յետոյ՝ բանտարկեալներից շատե-  
րը նրան առաջարկում էին փախչել, բայց նա  
ը կամեցաւ: Կալանաւորները նրա պատու-  
հանից երկաթի կտորներ, մեխեր, սղոցներ էին  
ներս ծգում: Կօդի նման նարպիկ մարդուն  
դժուար չէր այդ գործիքներով կարել պա-  
տուհանի ցանցը և փախչել, բայց նա զրանք  
բոլոր աւելորդ էր համարում և ներս ծգուած  
իրերը պահապաններին էր տալիս:

1832 թուի յունիսի 6-ին, խանցագոր-  
ծութիւնից ուղիղ եօթն ամիս յետոյ հասաւ  
հատուցման բոպէն: Առաւօտուայ ժամը 7-ին  
խուցը մտաւ ոստիկանական չինովնիկը և  
յալտարարեց՝ որ նրան մի ժամ է մնում ա-  
պրելու:

— Ե՞ն, ի՞նչ կալ որ, սառնութեամբ ա-

սաց կլօդը, ևս այս գիշեր շատ լաւ էի քնել,  
չեմ կասկածում որ հետեւեալ գիշերն աւելի  
ևս լաւ կը քնեմ:

Մահից առաջ ասած ուժեղ մարդկանց  
խօսքերը միշտ ինչ որ վեհութեան են արտա-  
յալտում:

Եկաւ քահանան, յետոյ՝ նաև դահիճը:

Նա քահանալին մեծ ուշադրութեամբ  
լսեց և վերչը ցաւելով յալտնեց՝ որ ինքն ան-  
ձանօթ է եղել կրօնին:

Ապա ինգրեց՝ որ իր մկրատը յանձնեն  
Ալբինին:

Պահապաններով շրջապատւած՝ նրան  
գուրս բերին բանտից:

Նրա դէմքը դժգոյն էր, բայց զնում էր  
հասաւատ քալերով հայեացքն խաչին ուղ-  
ղած՝ որ իր առաջից տանում էր քահանան:

Գլխատման համար զիտմամբ կիրակի օր  
էին նշանակել, որպէսզի՝ որքան կարելի է շատ  
բազմութիւն ներկայ լինի. կարծես այստեղ  
հասարակութեան առաջ պարծենալու բան  
կար:

Կօզը՝ աչքերը խաչին յառած՝ հանդի-  
սաւոր կերպով բարձրացաւ կախազան: Նա  
ցանկութիւն յալտնեց համբուրելու քահա-



Նալին ու դահճին. մէկին՝ շնորհակալութեան  
համար, միւսին՝ ներելու: Դահճը չուզեց նրա  
հետ համբուրել և յետ մղեց:

Ժամը գեռ ևս 8-ը չեր լրացել՝ որ դահ-  
ճի ուժեղ հարուածի տակ ընկաւ այդ ազնիւ,  
խելօք զլուխը:

## Վ Ե Ր Ջ

### ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՅԱՆԻ

Նոր լուս տեսած զբքովիները.

1. Գործարան թէ երկրագործութիւն. . . . . 15 կ.
2. Սնապաշտութիւն և կախարգութիւն 20 „
3. Մաերմական խորհուրդներ  
պատանիներին . . . . . 20 „
4. Գոյութեան կոիւ . . . . . 20 „
5. Ռուգոլֆ Վիրխով . . . . . 25 „
6. Սէր և խանդ . . . . . 20 „
7. Պոռնկութիւն և անառակութիւն . . . . . 20 „
8. Նուէր հայ զինւորին (մամուլի տակ) . . . . . „

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ

Վերջին հրատարակութիւնները

1. Ընարութիւն կաթնատուների. . . . . 15 կ.
2. Ռուգոլֆ Վիրխով . . . . . 25 „
3. Հողարտ հոգու երդերից . . . . . 30 „
4. Համբարձումեան

Դիմել հայ զբավաճառ և աւագան



ՀՀ Ազգային գրադարան  
NL0395059

113

22 2252

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

1.	Քարը երգում է . . . . .	10	4.
2.	Ճշմարիտ մեծութիւնը . . . . .	7	"
3.	Արդար ծերունին . . . . .	10	"
4.	Մեծ տօն . . . . .	10	"
5.	Նոր լոյս . . . . .	10	"
6.	Ուսման սէրը . . . . .	7	"
7.	Մանկան մօտ և վերջին խօսք .	7	"
8.	Մանկան մօտ . . . . .	7	"
9.	Գեղեցկուհի Մարօ (մամուլի տակ)		

